



**ԱՐՄԵՆԻԱ
ԻՆՇՈՒՐԱՆՍ**

**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
«07» փետրվարի 2025թ. թիվ 17 որոշմամբ

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք.Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1.....	4
ԲԱԺԻՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
ԲԱԺԻՆ II. ՕԴԱՆԱՎԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ	5
ԲԱԺԻՆ III. ՕԴԱՆԱՎԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԵՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	8
Մաս 1. Պատասխանատվություն երրորդ անձանց հանդեպ.....	8
Մաս 2. Պատասխանատվություն թռիչքային առաջադրանքի ընթացքում թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմերի անդամների կյանքին և առողջությանը հասցված վնասի համար	13
ԲԱԺԻՆ IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	14
ԲԱԺԻՆ V. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ...	15
ԲԱԺԻՆ VI. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....	19
ԲԱԺԻՆ VII. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ	20
Մաս 1. Օդանավի ամբողջական կորուստ կամ վնաս.....	20
Մաս 2. Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվություն	24
Մաս 3. Ավիաընկերության պատասխանատվություն՝ կապված թռիչքային առաջադրանքի ընթացքում թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ.....	27
ԲԱԺԻՆ VIII. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ.....	30
ԲԱԺԻՆ VIII. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ.....	31
ԳԼՈՒԽ 2.	32
ԲԱԺԻՆ X. ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ, ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՆԴՈՍԱՄԵՆՏՆԵՐ	32
Պատասխանատվության սահմանափակում	32
Ապահովագրական վճարի վճարում.....	32
Լրացուցիչ օդանավերի ապահովագրության և օդանավի ապահովագրության պայմանագրից օդանավերի հանում	32
Ապահովագրության մեջ նոր ընդգրկվող օդանավերի մասով քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության և պայմանագրից հանված օդանավերի մասով ապահովագրության պայմանագրի գործունեության դադարեցում	33
Գումարի վերադարձ օդանավի պարապուրդի դեպքում.....	34
Միջուկային ռիսկերի բացառումը ապահովագրության պայմաններից	35
Ուղևորների հանդեպ պատասխանատվություն.....	36

Աղմուկի, աղտոտման և այլ վտանգների ներգործության բացառում	38
Ռազմական ռիսկերի, գողության և այլ վտանգների ռիսկերի բացառում.....	38
Ընդլայնված ծածկույթ (պատասխանատվություն).....	39
Ոչ ավիացիոն պատասխանատվություն	41
Ավիացիոն ֆինանսական պայմանագրերի և վարձակալության պայմանագրերի վերաբերյալ ինդոսամենտ	41
1999 թ. Համաձայնագրերի (Երրորդ անձանց իրավունքների) մասին օրենքի բացառում...	44
Օդաչուների ապահովագրություն	44
Լրացուցիչ վճարումներ	45
Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառում.....	45
Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառման մասին դրույթի գործողության սահմանափակում.....	46
Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառման մասին դրույթի գործողության սահմանափակում.....	47
Ենթավարձակալության տրվող սարքավորումների ապահովագրության պայմաններ	48
Ռազմական ռիսկերի, գողության և այլ վտանգների ապահովագրություն	54
Առավելագույն վտանգով երկրների և շրջանների բացառում	57
Վեճերի լուծման կարգ.....	58

ԳԼՈՒԽ 1.

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն «Ավիացիոն ապահովագրության կանոնները», (այսուհետ՝ Կանոններ), մշակված են Հայաստանի Հանրապետության Օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

2. Կանոնները հանդիսանում են ավիացիոն ապահովագրության պայմանագրի կամ վկայագրի (այսուհետ՝ ապահովագրության պայմանագիր) անբաժանելի մասը: Ապահովագրության պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին: Ապահովագրության պայմանագրերում Կանոններից տարբերվող պայմաններ կարող են ներառվել միայն.

ա) նման պահանջ Եվրախորհրդի կողմից կամ այն երկրի կողմից սահմանված լինելու դեպքում, որի տարածքով կատարվելու է թռիչք,

բ) օդանավի վարձակալության և/կամ լիզինգի պայմանագրով նման պահանջ սահմանված լինելու դեպքում:

3. «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, այսուհետ՝ Ապահովագրող, գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, սույն ավիացիոն պայմանների համաձայն իրականացնում է ապահովագրություն օրենսդրությամբ սահմանված հետևյալ դասերով՝

- օդանավերի ապահովագրություն,
- օդանավերի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:

4. Կանոնների համաձայն կնքված ավիացիոն ապահովագրության պայմանագիրը կարող է նախատեսել ինչպես սույն պայմաններով նախատեսված առանձին դասերով ապահովագրություն, այնպես էլ՝ բոլոր դասերով:

5. Կանոններում օգտագործվում են հետևյալ հիմնական տերմինները՝

5.1. *Օդանավի վթարային վերանորոգում*՝ չալանավորած վերանորոգում օդանավի աշխատանքը վերականգնելու համար, որն իրականացվում է վնասվածք ստանալուց հետո:

5.2. *Ագրեզայր*՝ օդանավի հիմնական կառուցվածքային մաս, որն ունի կոնկրետ այդ մասի համար նախատեսված միջվերանորոգման ռեսուրս և որի համար կա առանձին անձնագիր կամ ֆորմուլար: Օդանավի շարժիչը համարվում է մեկ ագրեզատ:

5.3. *Օդանավ*՝ թռչող սարք, որը մնում է մթնոլորտում օդի հետ փոխազդեցության շնորհիվ: Նման փոխազդեցությունը տարբերվում է երկրի կամ ջրի մակերևույթից արտացոլված օդի փոխազդեցությունից (օդանավ, ուղղաթիռ, հատուկ նշանակության թռչող սարք, ինչպես նաև պլանյոր, դելտոպլան, օդագնաց սարք և օդապարիկ):

Օդանավը ներառում է իրանը, ինչպես նաև շարժիչները, գործիքները, սարքավորումը, տեղադրված կամ դրա հավաքածուի համար նախատեսված կամ դրանից ժամանակավորապես հանված պարագաները և դետալները, որոնք չեն փոխարինվում այլ շարժիչներով, գործիքներով, սարքավորումներով և դետալներով, բացառությամբ վառելիքի և քսանյութերի, հատուկ հեղուկների և այլ ծախսվող նյութերի:

5.4. *Օդանավի կործանում* (ամբողջական կամ կառուցվածքային՝ կոնստրուկտիվ)՝ Ամբողջական կործանում՝ օդանավի ամբողջական ոչնչացում, երբ նրա ագրեգատներից ոչ մեկը չեն կարող հետագայում օգտագործվել իրենց ուղղակի նշանակությամբ:

Կառուցվածքային (կոնստրուկտիվ) կործանում՝ օդանավի տեխնիկապես անհնար կամ տնտեսապես աննպատակահարմար վերականգնում, ինչպես նաև դրա ուղղակի նշանակությամբ օգտագործման անհնարինություն:

5.5. *Խարսխված*՝ ժամանակահատված, որի ընթացքում օդանավը գտնվում է ջրի վրա և ամրացված է խարխսիով, ներառյալ խարսխի գցման և այն բարձրացման ժամանակահատվածը:

5.6. *Օդանավի վնասվածք*՝ կառուցվածքի ամբողջականության կամ հանգույցների (ագրեգատների) խախտում արտաքին պատահական ազդակների պատճառով, որի հետևանքով պահանջվում է վթարային վերանորոգում:

5.7. *Թռիչք*՝ Օդանավի (պլանյորի) համար – վերելքի համար օդանավի շարժման կամ թռիչքի համար նախատեսված տեղում առանց կանգնելու շարժիչների աշխատանքի ռեժիմի մեծացման պահից մինչև վայրէջքի դեպքում թափավազքի ավարտը:

Այլ օդանավերի համար – մակերևույթից կտրվելու պահից մինչև վայրէջքի ժամանակ մակերևույթին հպվելու միջև ընկած ժամանակահատվածը:

5.8. *Կանոններ*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՍՊԸ ավիացիոն ապահովագրության սույն Կանոնները:

5.9. *Անհայտ կորած*՝ օդանավը համարվում է անհայտ կորած, երբ այն չի ժամանել նշանակման վայր 60 օրվա ընթացքում կամ փնտրումը պաշտոնապես դադարեցվել է այդ ժամկետից շուտ: Անհայտ կորելու օրը համարվում է օդանավի հետ վերջին կապ ունենալու օրը և ժամը կամ այն օրը, որի դրությամբ հայտնի է եղել օդանավի գտնվելու վայրը:

5.10. *Գերնավարում*՝ այն ժամկետը, որի ընթացքում օդանավը շարժվում է թռիչքուղով սեփական շարժիչների քարշի ազդեցության ներքո կայանման վայրից մինչև թռիչքը սկսելու տեղը կամ վազքը ավարտելուց հետո մինչև կայանման կանգնեցնելը (խարխսի գցելը):

5.11. *Կայանում*՝ ժամանակահատված, որի ընթացքում օդանավը չի գտնվում թռիչքի, գետնավարման և խարխսի գցելու ընթացքում:

5.12. *Ապահովագրական արժեք*՝ իրական արժեք - ապահովագրության պայմանագրի կնքման օրվա դրությամբ օդանավի արժեքը:

5.13. *Ապահովագրական գումար* (ապահովագրական պատասխանատվության չափ)՝ ապահովագրության պայմանագրով սահմանված դրամական մեծություն, որից հաշվարկվում է ապահովագրական հատուցման չափը:

5.14. *Ֆրանշիզա*՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված դրամական մեծություն, որը իրենից ներկայացնում է վնասի այն մասը, որը ենթակա չէ փոխհատուցման Ապահովագրողի կողմից: Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա սույն պայմաններով նախատեսված դեպքերում Ապահովագրողը փոխհատուցում է Ապահովագրվողին հասցված վնասը՝ մասհանելով ֆրանշիզան:

5.15. *Ապահովագրող*՝ «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՍՊԸ:

ԲԱԺԻՆ II. ՕԴԱՆԱՎԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

6. Սույն բաժնի պայմանները կիրառվում են ավիացիոն ապահովագրության պայմանագրի կնքման և իրականացման դեպքում օդանավի կմախքի ապահովագրության մասով:

7. Ապահովագրության օբյեկտը

7.1. Ապահովագրվողի գույքային շահերը, որոնք կապված են օդանավի կործանման կամ վնասվածքի հետևանքով ապահովագրության պայմանագրում նշված օդանավի տնօրինման, օգտագործման, տիրակալման հետ:

7.2. Կանոնների համաձայն կարող են ապահովագրվել.

- օդանավեր (քաղաքացիական, պետական և փորձարարական), որոնք ունեն օդանավի պետական գրանցման վկայական, թռիչքային պիտանելիության սերտիֆիկատ (վստահագիր) կամ դրանց փոխարինող այլ փաստաթղթեր.

- օդանավերի առանձին ագրեգատներ, որոնք տեղադրված են սույն պայմանների համաձայն ապահովագրված օդանավի վրա և ունեն պատշաճ փաստաթղթային ձևակերպում (անձնագիր, ֆորմուլար և այլն) կամ հանված են օդանավից և դիտարկվում են որպես պահեստամաս:

7.3. Եթե Կանոններով այլ բան նախատեսված չէ, ապա օդանավի առանձին ագրեգատների ապահովագրության համար կիրառվում են Կանոնների այն դրույթները, որոնք առնչվում են օդանավին:

8. Հատուկ տերմինները

Պայմանագրի կնքման և իրականացման դեպքում կիրառվում են հետևյալ տերմինները.

Դեպք՝ հանկարծակի, անկանխատեսելի պատահար, որի արդյունքում օդանավը կործանվել կամ վնասվել է: Պատահարը պետք է գրանցվի իրավասու մարմինների կողմից և ձևակերպվի փաստաթղթերով:

Ապահովագրական ակտ՝ փաստաթուղթ, որը կազմվում է Ապահովագրողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից ապահովագրական հատուցում տալու դեպքում, որը հաստատում է Ապահովագրվածի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից հայտարարված պատահարը որպես ապահովագրական դեպք և, որը ներառում է ապահովագրական փոխհատուցման գումարի հաշվարկը:

Ապահովագրվող՝ օդանավի ապահովագրության պայմանագրով որպես Ապահովագրվող կարող է հանդես գալ իրավաբանական կամ ֆիզիկական անձը, որը.

ա) օդանավի սեփականատեր է

բ) օրինական հիմքերով շահագործում է այն

գ) պայմանագրով կամ օրենքով նրա վրա դրված է օդանավը ապահովագրելու պարտավորությունը:

Շահառու՝ ապահովագրության պայմանագրով օդանավը կարող է ապահովագրվել այն անձի օգտին (ապահովագրված անձ կամ շահառու), որը օրենքով, այլ իրավական ակտով կամ պայմանագրով ունի շահագրգռվածություն այդ գույքի պահպանման հարցում:

Ապահովագրվողն իրավունք ունի ապահովագրության պայմանագիրը կնքելիս ներառել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (Շահառուներին) ապահովագրական հատուցում ստանալու նպատակով, ինչպես նաև պայմանագրի գործողության ընթացքում փոխել կամ բացառել նրանց:

Ապահովագրության պայմանագրով նախատեսված որևէ պարտականություն Շահառուի կողմից իրականացնելու պահից կամ նրա կողմից ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրողին պահանջ ներկայացնելու պահից նա չի կարող փոխարինվել այլ անձով:

Ապահովագրության պայմանագիրը Շահառուի օգտին կնքելը Ապահովագրվողին չի ազատում այդ պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումից, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ, եթե Ապահովագրվողի

պարտականությունները կատարվել են այն անձի կողմից, որի օգտին կնքվել է պայմանագիրը:

Ապահովագրական ռիսկ. Ապահովագրական ռիսկ են համարվում ապահովագրության պայմանագրում նշված օդանավին առնչվող այն կանխատեսվող պատահարները, որոնք ունեն հավանական բնույթ և կարող են լինել պատահական:

Ապահովագրական դեպք. Ապահովագրական դեպք է համարվում ապահովագրության պայմանագրով նախատեսված այն պատահարը, որի ի հայտ գալու պահից ծագում է Ապահովագրողի փոխհատուցում տալու պարտականությունը:

Ապահովագրությունը տարածվում է օդանավի հետ առնչվող այն ապահովագրական դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել թռիչքի, գետնավարման և կայանման (խարսխված լինելու) ընթացքում, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, իսկ օդանավը մեկ չվերթի համար ապահովագրելու դեպքում (թռիչք)՝ այն ապահովագրական դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել թռիչքի համար օդանավակայանում շարժիչների միացման պահից մինչև կանգառի օդանավակայանում դրանց անջատելը:

Ապահովագրական գումար. Ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի համաձայնությամբ՝ ելնելով օդանավի ապահովագրական արժեքից: Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ապահովագրության պայմանագրի օրվա դրությամբ օդանավի ապահովագրական արժեքը:

Ֆրանշիզա. Ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսվել ֆրանշիզա: Ապահովագրողը փոխհատուցում է՝ մասհանելով ֆրանշիզան: Եթե ապահովագրության պայմանագրով հատուկ նշված չէ, ապա ֆրանշիզան չի կիրառվում պատահարի հետևանքով օդանավի կորստի (ամբողջական կամ կառուցվածքային) կամ անհայտ կորելու դեպքում:

Նորմալ շահագործման դեպքում վնասվածք. Ապահովագրական փոխհատուցում տալու Ապահովագրողի պարտավորությունը չի սկսում, եթե օդանավի վնասվածքը կապված է ագրեզատների մեջ տեղի ունեցող աշխատանքային պրոցեսների, ինչպես նաև շահագործման նորմալ ծանրաբեռնվածության հետ, այն է.

ա) առանձին ագրեզատների (դրանց համակարգի) վնասվածք և խափանում, որոնք կապված են շահագործման ընթացքում դրանց մաշվածքի և հնանալու, դրանց թերությունների և աշխատանքային պրոցեսների գործողությունների և համապատասխան գործոնների հետ, եթե նման վնասվածքի և խափանման հետևանքը տեղայնացված են այդ ագրեզատների (դրանց համակարգի) ներսում,

բ) ագրեզատների առանձին դետալների վնասվածք, որոնք ունեն կուտակային կամ աճողական բնույթ (հոգնածության ճաքեր, կոռոզիա, շերտավորում և այլն), որոնք կապված են շահագործման պայմանների և դրա ծանրաբեռնվածության հետ,

գ) շարժիչի կոմպրեսորի թիակների, օդային վինտերի, արտաքին երեսպատման և օդանավի այլ ագրեզատների տեղական վնասվածքներ (ծոմովածք և անցք), եթե դրանք չեն հանդիսացել օդանավի հետ պատահած կոնկրետ պատահարի պատճառ և հայտնաբերվել են հետթռիչքային ստուգման կամ օդանավի վրա ռեգլամենտային աշխատանքներ կատարելու ժամանակ:

Եթե ա) և բ) ենթակետերում նշված պատճառների արդյունքում տեղի ունենա օդանավի կործանում կամ դրա այլ ագրեզատների և էլեմենտների վնասվածք, ապա այդպիսի դեպքերը (պատահարները) կհամարվեն որպես ապահովագրական դեպք:

Ծանոթություն. Օդանավի էլեմենտի վնասվածք է համարվում դրա առանձին համակարգերի կամ ագրեզատների վնասվածքը, որոնք խափանվել կամ վնասվել են ա) և բ) ենթակետերում նշված պատճառների հետևանքով:

9. Կողմերի իրավունքները և պարտականությունները: Ապահովագրվողը պարտավոր է Ապահովագրողին տեղեկացնել այլ կնքված կամ կնքվող ապահովագրության պայմանագրերի մասին, որոնք առնչվում են ապահովագրված օդանավին կամ դրա առանձին ագրեգատներին:

Օդանավի հետ տեղի ունեցած պատահարի դեպքում Ապահովագրվողը պարտավոր է Ապահովագրողի հետ համաձայնեցնել բոլոր այն միջոցառումները, որոնք կապված են վնասված օդանավի կամ դրա ագրեգատների վերականգնման հետ:

10. Ապահովադիրն իրավունք ունի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1014 հոդվածի 2-րդ մասի համաձայն միակողմանիորեն լուծելու ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

ԲԱԺԻՆ III. ՕԴԱՆԱՎԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մաս 1. Պատասխանատվություն երրորդ անձանց հանդեպ.

11. Սույն բաժնի պայմանները կիրառվում են ավիացիոն ապահովագրության պայմանագրի կնքման և իրականացման դեպքում ավիափոխադրողների և օդանավի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության մասով:

12. Ապահովագրության օբյեկտ

Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովագրվողի գույքային շահերը կապված ապահովագրության պայմանագրում նշված օդանավի շահագործման, ուղևորների, ուղեբեռի, բեռի և փոստի օդային փոխադրումների իրականացման կամ այդ օդանավով ավիացիոն աշխատանքներ կատարելու ընթացքում տուժած անձանց կյանքին և առողջությանը կամ նրանց գույքին հասցված վնասի համար պատասխանատվության հետ:

13. Հատուկ տերմինները

Պայմանագրի կնքման և իրականացման դեպքում կիրառվում են հետևյալ տերմինները.

Պատահար՝ հանկարծակի, անկանխատեսելի պատահար օդանավի շահագործման, ուղևորների, ուղեբեռի, բեռի և փոստի տեղափոխման կամ ավիացիոն աշխատանքներ կատարելու ընթացքում, որը վնաս է հասցրել ֆիզիկական անձի կյանքին կամ առողջությանը և/կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձի գույքին: Պատահարը պետք է գրանցվի իրավասու մարմինների կողմից և ձևակերպվի փաստաթղթերով:

Կյանքին և առողջությանը հասցված վնաս՝ մարմնական վնասվածք (խեղում) կամ ֆիզիկական անձի մահ, որպես պատահարի հետևանք:

Գույքին հասցված վնաս՝ կործանում (կորուստ), պակասորդ, փչացում կամ գույքի վնասում որպես պատահարի հետևանք:

Անձինք, ում վնաս է հասցվել (տուժած անձինք)՝ տուժած անձինք (Շահառուներ) կարող են լինել ուղևորները, բեռնատերերը կամ երրորդ անձինք, որոնց վնաս է հասցվել օդանավի շահագործման, ուղևորների, ուղեբեռի, բեռների և փոստի օդային տեղափոխումների կամ ավիացիոն աշխատանքների կատարման ընթացքում:

Երրորդ անձինք՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք ունեն Ապահովագրվողին պահանջ ներկայացնելու իրավունք հասցված վնասի փոխհատուցման դիմաց: Երրորդ անձ չի համարվում Ապահովագրվողը, նրա աշխատողները, ինչպես նաև այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք որևէ օրինական հիմքով հանդես են գալիս Ապահովագրվողի անունից:

Ուղևոր՝ ֆիզիկական անձ, որի առջև Ապահովագրվողը պատասխանատվություն է կրում՝ համաձայն ուղևորի օդային փոխադրման պայմանագրի: Եթե նման պայմանագիր գոյություն չունի, ապա ուղևոր է համարվում ցանկացած ֆիզիկական անձ, որը թռիչքի նպատակով օրինական հիմքերով գտնվում է օդանավի մեջ, նստում է օդանավ կամ դուրս գալիս դրանից, բացառությամբ թռիչքային և կաբինային անձնակազմի անդամների:

Բեռնատեր (բեռը առաքող կամ ստացող)՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հանդեպ Ապահովագրվողը կրում է պատասխանատվություն համաձայն բեռի կամ փոստի օդային փոխադրման պայմանագրի: Եթե նման պայմանագիր գոյություն չունի, ապա բեռնատեր է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում գույքը իրավական հիմքերով գտնվում է օդանավի վրա, բեռնվում կամ բեռնաթափվում է:

Ապահովագրական ակտ՝ փաստաթուղթ, որը կազմվում է Ապահովագրողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից այն Ապահովագրվողի կամ անձի (անձանց) դիմումի արդյունքներով ապահովագրական հատուցում տալու դեպքում, որոնց վնաս է հասցվել, և որը հավաստում է հայտարարված դեպքի իսկությունը և պարունակում է ապահովագրական հատուցման գումարի հաշվարկ:

Ապահովագրվող՝

ա) Կանոնների 7.4 կետի 3-րդ պարբերությունում նշված անձինք, որոնք սահմանված կարգով ստացել կամ ստանում են.

- օդանավը շահագործողի սերտիֆիկատ (վկայական) (կոմերցիոն կամ ընդհանուր նշանակության ավիացիայի),

- օդային փոխադրումների պայմանագրերի հիման վրա ուղևորների, ուղեբեռի, բեռի, փոստի օդային փոխադրումների իրականացման համար լիցենզիա,

- ֆիզիկական և իրավաբանական անձանց պահանջների բավարարման համար ավիացիոն աշխատանքներ իրականացնելու լիցենզիա,

բ) շահագործում են պետական և/կամ փորձարարական ավիացիայի օդանավերը իրավասու մարմինների կողմից տրված, սահմանված ձևով այն փաստաթղթերի հիման վրա, որոնք թույլ են տալիս օդանավի նման շահագործում օրինական հիմքերով:

Շահառու. Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված ի օգուտ այն տուժած անձանց (Շահառուների), որոնց կարող է վնաս հասցվել օդանավը շահագործելու, ուղևորների օդային փոխադրումների, ուղեբեռի, բեռի և փոստի կամ ավիացիոն աշխատանքներ իրականացնելու ընթացքում:

Ապահովագրական դեպք. Սույն պայմանների համաձայն ապահովագրական դեպք է համարվում Ապահովագրվողի պատասխանատվությունը ի հայտ գալու փաստը, որը նրա կողմից ճանաչվել է կամավոր կերպով և Ապահովագրողի նախնական համաձայնությամբ կամ դատարանի կայացրած որոշմամբ այն պարտականությունների մասով, որոնք ծագում են ապահովագրության պայմանագրով նախատեսված և տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում տուժած անձանց (Շահառուներին) հասցված վնասի դեպքում՝ օդանավի շահագործման, ուղևորների օդային փոխադրումների, ուղեբեռի, բեռի և փոստի կամ ավիացիոն աշխատանքներ իրականացնելու ընթացքում:

14. Ապահովագրողի պատասխանատվության չափը

Սույն բաժնի պայմանների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրով Ապահովագրողի պատասխանատվության չափը որոշվում է Ապահովագրվողի կողմից ընտրված ստորև թվարկված ապահովագրության պայմաններից (կամ դրանց միասնությունից).

ա) երրորդ անձանց հասցված վնասի պատասխանատվության ապահովագրություն

բ) ուղևորներին հասցված վնասի պատասխանատվության ապահովագրություն

գ) բեռնատերերին հասցված վնասի պատասխանատվության ապահովագրություն:

15. Երրորդ անձանց հասցված վնասի պատասխանատվության ապահովագրությունը

Երրորդ անձանց հասցված վնասի պատասխանատվության ապահովագրության դեպքում կարող է ապահովագրվել Ապահովագրվողի պատասխանատվության դիսկը այն պարտավորությունների գծով, որոնք ծագել են երրորդ անձանց վնաս հասցնելու արդյունքում որպես ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում օդանավի շահագործման, ավիացիոն աշխատանքներ իրականացնելու ընթացքում օդանավի հետ տեղի ունեցած պատահարի հետևանք և որը հանգում է կյանքին, առողջությանը հասցված վնասի և/կամ մահվան կամ գույքին (ներառյալ անասուններին) հասցված վնասի: Սույն կետի համաձայն ապահովագրական հատուցում տալու Ապահովագրողի պարտավորությունը ծագում է պայմանով, որ նշված վնասը պատճառվել է անմիջապես ապահովագրության պայմանագրում նշված օդանավի կամ դրանից ընկած որևէ անձի կամ առարկայի կողմից:

16. Ուղևորներին հասցված վնասի պատասխանատվության ապահովագրությունը

Ուղևորներին հասցված վնասի պատասխանատվության ապահովագրության դեպքում կարող է ապահովագրվել Ապահովագրվողի պատասխանատվության դիսկը այն պարտավորությունների գծով, որոնք ծագել են ապահովագրության գործողության ընթացքում պատահարի արդյունքում ուղևորներին հասցված վնասի հետևանքով ուղևորների օդային փոխադրումների, ուղեբեռի կամ ավիացիոն աշխատանքներ իրականացնելու ընթացքում, և որը իր հերթին հանգել է.

- ուղևորների կյանքի և առողջության վնասի,

- ուղեբեռի և ուղևորի մոտ գտնվող իրերի կործանում (կորուստ), պակասորդ կամ վնասում (փչացում):

Սույն կետի համաձայն ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը սահմանափակվում է օդային փոխադրման ժամկետով.

- ուղևորի կյանքին, առողջությանը վնաս հասցնելու և ուղևորի մոտ գտնվող իրերի կործանման (կորուստ), պակասորդի կամ վնասվելու (փչացման) դեպքում՝ օդանավ նստելու նպատակով ուղևորի մինչթռիչքային զննում անցնելու պահից մինչև այն պահը, երբ օդանավի ուղևորը փոխադրողի լիազորված անձանց հսկողության ներքո դուրս է գալիս օդանավակայանից (այդ թվում տրանզիտային միջանկյալ օդանավից), եթե օդային փոխադրման այլ ժամկետ չի նախատեսվում ՀՀ միջազգային պայմանագրերով.

- ուղեբեռի կործանման (կորուստ), պակասորդի կամ վնասվելու (փչացման) դեպքում՝ ուղեբեռը օդային փոխադրման ընդունելու պահից մինչև այն նշանակման օդանավակայանում ուղևորին կամ ուղեբեռը ստանալու լիազորություն ունեցող անձին տալու պահը, եթե օդային փոխադրման այլ ժամկետ չի նախատեսվում ՀՀ միջազգային պայմանագրերով:

17. Բեռի տիրոջը հասցված վնասի պատասխանատվության ապահովագրությունը

Բեռի տիրոջը հասցված վնասի պատասխանատվության ապահովագրության դեպքում կարող է ապահովագրվել Ապահովագրվողի պատասխանատվության դիսկը այն պարտավորությունների գծով, որոնք ծագել են ապահովագրության գործողության ընթացքում պատահարի արդյունքում բեռի տիրոջը հասցված վնասի հետևանքով բեռի և փոստի օդային փոխադրումների ընթացքում, և հանգել է բեռի կամ փոստի կործանման (կորուստ), պակասորդի կամ վնասման (փչացման):

Սույն կետի համաձայն ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը սահմանափակվում է օդային փոխադրման ժամկետով՝ բեռը կամ փոստը օդային փոխադրման ընդունելու պահից մինչև բեռը կամ փոստը բեռը ստացողին տալը կամ դրանք հաստատված կանոններով այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձին հանձնելը, եթե օդային փոխադրման այլ ժամկետ չի նախատեսվում ՀՀ միջազգային պայմանագրերով:

18. Հատուկ բացառությունները

ա) Բարոյական վնասը

Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրողը չի հատուցում բարոյական վնասի գծով Ապահովագրվողի պարտականությունների դիմաց:

բ) Երրորդ անձանց վնասը

Ապահովագրության պայմանագիրը իրագործելիս երրորդ անձանց վնասի դիմաց պատասխանատվության ապահովագրության մասով չի ապահովագրվում Ապահովագրվողի պատասխանատվությունը այն պարտավորությունների մասով, որոնք ծագում են որպես հետևյալ վնասների հետևանք՝

- Ապահովագրվողի աշխատակիցների կյանքին և առողջությանը հասցված վնաս աշխատանքային պարտականությունները կատարելիս,

- Ապահովագրության պայմանագրում նշված օդանավի թռիչքային, կաբինային կամ այլ անձնակազմի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնաս,

- ցանկացած գույքին (ներառյալ անասուններին) հասցված վնաս, որոնց Ապահովագրվողը տիրապետում է օրինական հիմքերով, ներառյալ այն գույքին հասցված վնասը, որը գտնվում է օդանավի վրա, ինչպես նաև բեռնվում է դրա մեջ կամ բեռնաթափվում է դրանից,

- այն դեպքերի արդյունքում, որոնք նախատեսված են «Աղմուկի ռիսկի ներագրեցությունը, աղտոտումը և այլ նմանատիպ ռիսկերի բացառելու մասին դրույթում» - AVN 46B (Գլուխ 2):

գ) Ուղևորներին հասցված վնասը

Ապահովագրության պայմանագիրը իրագործելիս ուղևորին հասցված վնասի դիմաց պատասխանատվության ապահովագրության մասով (կետ 25 պայմաններ) չի ապահովագրվում Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվության ռիսկը այն պարտավորությունների մասով, որոնք ծագում են որպես հետևյալ վնասների հետևանք.

- Ապահովագրվողի աշխատակիցների կյանքին և առողջությանը հասցված վնաս աշխատանքային պարտականությունները կատարելիս (գործատուի պատասխանատվություն).

- ապահովագրության պայմանագրում նշված օդանավի թռիչքային, կաբինային կամ այլ անձնակազմի կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնաս:

դ) Բեռնատիրոջը հասցված վնասը

Ապահովագրության պայմանագիրը իրագործելիս բեռնատիրոջը հասցված վնասի դիմաց պատասխանատվության ապահովագրության մասով չի ապահովագրվում Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվությունը այն պարտավորությունների մասով, որոնք ծագում են որպես հետևյալ վնասների հետևանք՝

- կենդանի անասունների տեղափոխում,

- շուտ փչացող բեռների փոխադրում,

- բեռին կամ փոստին հասցված վնաս որդերի, կրծողների և միջատների կողմից,

- բեռի կամ փոստի առաքման ժամկետի խախտում:

19. Ապահովագրական գումարը

Ապահովագրական գումարը սահմանվում է ապահովագրության պայմանագրով կողմերի համաձայնությամբ: Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համարվում է ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցման առավելագույն գումարը: Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում կարող են սահմանվել առանձին ապահովագրական գումարներ (փոխհատուցման չափեր)՝

- մեկ կամ մի քանի անձանց կյանքին, առողջությանը հասցված վնասի գծով,
- ցանկացած քանակությամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին հասցված վնասի գծով:

20. Ավիացիոն գործունեության դադարումը

Ապահովագրության պայմանագրի գործողությունը դադարում է այն դեպքում, երբ ՀՀ օրենսդրության համաձայն դադարում է օդանավերի շահագործման մասով, ուղևորների օդային փոխադրումների, ուղեբեռի կամ ավիացիոն աշխատանքներ իրականացնելու Ապահովագրվողի գործունեությունը:

21. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

Ապահովագրողը իրավունք ունի հանդես գալով Ապահովագրվողի անունից և նրա համաձայնությամբ, բանակցություններ վարել և կնքել համաձայնություն տուժած անձանց պահանջով հասցված վնասի վերաբերյալ, ինչպես նաև վարել դրա հետ կապված գործեր:

Ապահովագրվողը պարտավոր է.

- Ապահովագրողին տեղեկացնել կնքված կամ կնքվող քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի մասին՝ կապված ապահովագրության պայմանագրում նշված օդանավի շահագործման, օդային տեղափոխումների իրականացման կամ նման օդանավի վրա ավիացիոն աշխատանքների իրականացման հետ,

- Ապահովագրողին տեղեկացնել նոր կնքվող պայմանագրերի և համաձայնությունների (կամ ավելի վաղ կնքված գործող պայմանագրերի և համաձայնությունների հավելվածների) մասին, որոնք վերաբերում են Ապահովագրվողի կողմից իր վրա վերցրած պատասխանատվության չափին և որոնք ի հայտ են գալիս վնասի հասցման հետևանքով և նման պատասխանատվության գծով կիրառվող սահմանափակումների գործողության սկզբից 30 օր առաջ,

- ապահովել համապատասխան ձևակերպում և փաստաթղթերի հանձնում. ուղևորին՝ տոմս և բեռի կտրոն (կամ փոխարինող փաստաթղթեր) մինչ օդային տեղափոխումը, բեռնատիրոջը՝ բեռի օդանավի վրա փոխադրման վերադիր այն պայմանով, որ ցանկացած ուղևոր (ինչպես նաև գրանցված բեռը և ուղևորների մոտ գտնվող իրերը) կամ ցանկացած բեռ կամ փոստ, որոնք վճարովի կարգով տեղափոխվում են օդանավի վրա, կտեղափոխվեն տեղափոխման պայմանագրին համաձայն (տոմս, բեռի կտրոն և վերադիր) Ապահովագրվողի վրա վերցրած պատասխանատվության չափը հավաստող ուղևորներին կրած վնասի համար, և նման պատասխանատվության կիրառվող սահմանափակումները,

- պատահարի դեպքում, որը կարող է առիթ հանդիսանալ Ապահովագրվողի կողմից վնասի փոխհատուցման պահանջի ներկայացման համար, չճանաչել ոչ մի պատասխանատվություն, չընդունել տուժած անձանց պահանջների բավարարման գծով ուղղակի և անուղղակի պարտականություններ, և չկատարել որևէ վճարումներ առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության: Սույն դրույթի խախտումը Ապահովագրողին

իրավունք է տալիս հրաժարվել որևէ ապահովագրական հատուցման վճարում իրականացնելուց:

Մաս 2. Պատասխանատվություն թռիչքային առաջադրանքի ընթացքում թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմերի անդամների կյանքին և առողջությանը հասցված վնասի համար

22. Սույն մասի պայմանները կիրառվում են ավիացիոն ապահովագրության պայմանագրի կնքման և իրականացման դեպքում ապահովագրի պատասխանատվության մասով՝ կապված թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հատուցման հետ:

23. Ապահովագրության օբյեկտը

Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովագրվողի գույքային շահերը՝ կապված թռիչքային առաջադրանքի ընթացքում թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ:

24. Հատուկ տերմինները

Պայմանագրի կնքման և իրականացման դեպքում կիրառվում են հետևյալ տերմինները.

Պատահար՝ հանկարծակի, անկանխատեսելի պատահար օդանավի շահագործման ընթացքում, որը, վնաս է հասցրել թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը: Պատահարը պետք է գրանցվի իրավասու մարմինների կողմից և ձևակերպվի փաստաթղթերով:

Կյանքին և առողջությանը հասցված վնաս՝ մարմնական վնասվածք (խեղում) կամ ֆիզիկական անձի մահ՝ որպես պատահարի հետևանք:

Անձինք, որոնց վնաս է հասցվել (տուժած անձինք)՝ Ապահովագրվողի հետ աշխատանքային իրավահարաբերությունների մեջ գտնվող անձինք, որոնց կյանքին և/կամ առողջությանը վնաս է պատճառվել թռիչքային առաջադրանքի ընթացքում թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ:

Ապահովագրական ակտ՝ փաստաթուղթ, որը կազմվում է Ապահովագրողի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից այն Ապահովագրվողի կամ անձի (անձանց) դիմումի արդյունքներով ապահովագրական հատուցում տալու դեպքում, որոնց վնաս է հասցվել, և որը հավաստում է հայտարարված դեպքի իսկությունը և պարունակում է ապահովագրական հատուցման գումարի հաշվարկ:

Ապահովագրվող. Ապահովագրվող է համարվում այն ավիաընկերությունը, որի հետ Շահառուները գտնվում են աշխատանքային իրավահարաբերությունների մեջ և հանդիսանում են այդ ավիաընկերության թռիչքային կամ ինժեներատեխնիկական անձնակազմի անդամ:

Շահառու. Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված ի օգուտ Ապահովագրվող հանդիսացող ավիաընկերության թռիչքային կամ ինժեներատեխնիկական անձնակազմի այն անդամների, որոնց կարող է վնաս հասցվել թռիչքային առաջադրանքի ընթացքում թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ և, որոնք նշված են ապահովագրության պայմանագրում:

Ապահովագրական ռիսկ. Սույն պայմանների համաձայն կարող է ապահովագրվել Ապահովագրվող հանդիսացող ավիաընկերության պատասխանատվության ռիսկը այն

պարտավորությունների գծով, որոնց ծագում են տուժած անձանց (Շահառուների) կյանքին, առողջությանը կամ գույքին հասցված վնասի արդյունքում՝ որպես պատահարի հետևանք ապահովագրության գործողության ընթացքում:

Ապահովագրական դեպք. Սույն պայմանների համաձայն ապահովագրական դեպք է համարվում Ապահովագրվողի պատասխանատվությունը ի հայտ գալու փաստը, որը նրա կողմից ճանաչվել է կամավոր կերպով և Ապահովագրողի նախնական համաձայնությամբ կամ դատարանի կայացրած որոշմամբ այն պարտականությունների մասով, որոնք ծագում են ապահովագրության պայմանագրով նախատեսված և տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում տուժած անձանց (Շահառուներին) հասցված վնասի դեպքում:

Ապահովագրական գումար. Ապահովագրական գումարը սահմանվում է ապահովագրության պայմանագրով կողմերի համաձայնությամբ: Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը համարվում է ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցման սահմանային առավելագույն գումարը: Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում կարող են սահմանվել առանձին ապահովագրական գումարներ (փոխհատուցման չափեր):

- մեկ կամ մի քանի անձանց կյանքին, առողջությանը հասցված վնասի գծով
- ցանկացած քանակությամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին հասցված վնասի գծով:

25. Հատուկ բացառությունները

Բարոյական վնաս: Եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրողը չի հատուցում բարոյական վնասի գծով Ապահովագրվողի պարտականությունների դիմաց:

ԲԱԺԻՆ IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

26. Բացառությունները

Ապահովագրական դեպք չեն հանդիսանում Կանոնների 2 բաժնում նշված օդանավի վնասը կամ կործանումը, կամ սույն Պայմանների 3 բաժնում նշված Ապահովագրվողի պատասխանատվությունը, որը առաջացել է սույն Պայմաններում նշված իրադարձությունների հետևանքով:

27. AVN դրույթների կիրառում

Բացառություններին են վերաբերվում՝

ա) «Միջուկային ռիսկերի բացառման Դրույթներ»-ում նշված իրադարձությունները AVN 38B (բաժին Բ)

բ) «Ապահովագրության պայմանագրից ռազմական ռիսկերի, կողոպուտի ռիսկի և այլ վտանգների բացառման դրույթ»-ում նշված իրադարձությունները – AVN 48B (բաժին 2).

գ) «Ապահովագրության պայմանագրից ամսաթվերի էլեկտրական բացահայտման ռիսկերի, բացառման դրույթ»-ում նշված իրադարձությունները – AVN 2000 (բաժին 2)

28. Սույն պայմանների 2-րդ բաժնում նախատեսված օդանավի կործանման կամ վնասման ռիսկը կարող է ապահովագրվել նաև «Ռազմական ռիսկերի, կողոպուտի ռիսկի և այլ վտանգների դրույթ»-ին LSW555C համապատասխան (գլուխ 2):

29. Կանոնների 3-րդ բաժնում նշված պատասխանատվության ռիսկը կարող է ապահովագրվել նաև համաձայն «Ռազմական, կողոպուտի և այլ վտանգների ռիսկերից ապահովագրության լրացուցիչ պայմաններ»-ին AVN52E համապատասխան (բաժին 2):

30. Շահագործման բացառությունները

Ապահովագրության պայմանագրով նախատեսված իրադարձությունների հետևանքով Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցման վճարման հետ կապված պարտականությունները չեն առաջանում հետևյալ դեպքերում՝

ա) ապօրինի կամ ապահովագրության պայմանագրում չնախատեսված նպատակներով օդանավի շահագործումը,

բ) օդանավի շահագործումը ապահովագրության պայմանագրում չնախատեսված աշխարհագրական վայրում, եթե դա պայմանավորված չէ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ,

գ) ապահովագրության պայմանագրում չնշված կամ ապահովագրության պայմանագրով նախատեսված որակավորումից ցածր որակավորում ունեցող անձի կողմից օդանավի շահագործումը, կամ չլիազորված կամ դրա իրավունքը չունեցող անձի կողմից գետնավարումը,

դ) ցանկացած տրանսպորտային միջոցով օդանավի տեղափոխումը, բացառությամբ ապահովագրական դեպքի հետևանքով առաջացած վնասվածքի դեպքում տեղափոխումը, և օդանավի քարշակելը հաստիքային սարքավորումներով օդանավակայանի տարածքում,

ե) թռիչքի կամ վայրէջքի համար այնպիսի տարածքի/ հրապարակի օգտագործումը, որը չի համապատասխանում տվյալ տեսակի օդանավի շահագործման պահանջներին, եթե դա պայմանավորված չէ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ,

զ) թռիչքի իրագործումը՝ գերազանցելով օդանավի բեռնման թույլատրելի նորմաները կապված ուղևորների քանակի կամ բեռի կշռի կամ չափսի հետ կամ կենտրոնացման խախտում,

է) իրագործել օդանավի թռիչքը նախապես անսարք վիճակում, բացառությամբ այն դեպքերի, երբ նման թռիչքը իրագործվում է օդանավի թռիչքային շահագործման ղեկավարությանը համաձայն կամ հատուկ իրավասու մարմնի թույլտվությամբ, որի համար Ապահովագրողը ներկայացրել է իր համաձայնությունը գրավոր ձևով,

ը) օդանավի կործանումը կամ վնասումը, կամ Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը, կապված Ապահովագրվողի կամ իր ներկայացուցիչների կողմից իրագործված կողոպուտի կամ դիտավորյալ գործողությունների հետ,

թ) օդանավի կործանումը կամ վնասումը, կամ Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվության առաջացումը Ապահովագրվողի կամ իր ներկայացուցիչների միտումնավոր գործողությունների կամ նրանցից որևէ մեկի կողմից հաստատված ավիատրանսպորտային միջոցների շահագործման կամ հակահրդեհային անվտանգության կամ վառելիքի կամ պայթուցիկ նյութերի պահպանման կանոնների խախտումը և այլն:

ԲԱԺԻՆ V. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

12. Ապահովագրության դիմումը

Ապահովագրության պայմանագիր կնքելու համար Ապահովագրողը Ապահովագրողին է ներկայացնում Ապահովագրողի կողմից հաստատված ապահովագրության դիմում գրավոր ձևով:

13. Դիմումի հետ կցվող փաստաթղթերը

Ապահովագրողը բացի ապահովագրության դիմումից Ապահովագրողից իրավունք ունի պահանջել օդանավի նկատմամբ սեփականության կամ շահագործման (տիրապետման, օգտագործման) իրավունքը հավաստող փաստաթղթեր, օդանավի պետական գրանցման վկայագիր, օդանավի թռիչքային պիտանելիության վկայագիր կամ այլ դրանք փոխարինող փաստաթղթեր:

Ավիացիոն ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում II Բաժնի Պայմանների դրույթներին համաձայն, Ապահովագրողը իրավունք ունի Ապահովագրողից պահանջել նշված օդանավը շահագործելու իրավունքը հավաստող փաստաթղթեր (շահագործողի գործող վկայագիր կամ փոխարինող փաստաթուղթ), և Ապահովագրողի կողմից ուղևորների (ներառելով ուղեբեռը և անձնական իրերը) և բեռնատեղերի հանդեպ իր վրա վերցրած պատասխանատվության չափը հաստատող փաստաթուղթ, որոնք կիրառվում են նման պատասխանատվության համար (ուղևորատոմսի բլանկներ, ուղեբեռի անդորրագրեր, պայմանագրեր, համաձայնագրեր)

14. Պայմանագրի գործողության ժամկետը

Ապահովագրության պայմանագիրը կնքվում է կողմերի միջև համաձայնեցված ցանկացած ժամանակահատվածի համար: Ապահովագրության պայմանագիրը համարվում է կնքված և ուժի մեջ է մտնում պայմանագրում նշված ամսաթվից կամ ժամկետից:

Ապահովագրությունը տարածվում է այն դեպքերի վրա, որոնք տեղի են ունեցել ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից:

15. Ապահովագրության գործողության ժամկետը

Ապահովագրության ժամկետը նշվում է պայմանագրում: Ապահովագրողը հատուցում է ապահովագրական դեպքերը, որոնք տեղի են ունեցել 00.00 ժամից և մինչև 24.00 ժամը (ժամը ըստ պայմանագիրը տալու վայրի) պայմանագրում, որպես ապահովագրության ժամկետի սկիզբ և ավարտ նշված ամսաթվերին, եթե ապահովագրության պայմանագրում այլ բան նշված չէ:

Եթե ապահովագրության պայմանագրում նշված օդանավը ապահովագրության ժամկետի ավարտման պահին գտնվում է թռիչքում, ապա ապահովագրության պայմանագրով մինչ այդ հաստատված ժամկետը երկարացվում է մինչև տվյալ օդանավի առաջին վայրէջք կատարելը:

16. Ապահովագրական վճարը

Ապահովագրական վճարի չափը որոշում է Ապահովագրողը, հիմնվելով ապահովագրական գումարի և ապահովագրական սակագնի վրա:

Ապահովագրողը ապահովագրական վճարի չափը որոշելիս, որը ենթակա է վճարման ըստ ապահովագրության պայմանագրի, իրավունք ունի կիրառել իր հաստատված հիմնական ապահովագրական սակագինը, որը սահմանում է ապահովագրական վճարը հաշվի առնելով ապահովագրության պայմանները, Ապահովագրողի պարտականությունների ծավալը, շահագործվող օդանավերի տեսակները, ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը:

Ապահովագրողը ապահովագրական վճարի չափը սահմանելիս իրավունք ունի կիրառել ավելացված կամ իջեցված գործակիցներ հիմնական ապահովագրական սակագներին կախված օդանավի արտադրման տարեթվից, իր շահագործման կամ օդային փոխադրման

իրագործման աշխարհագրական շրջանը, թռիչքների բնութագիրը, օդանավերի շահագործման ինտենսիվությունը, թռիչքային անձնակազմի որակավորման մակարդակը և այլ ապահովագրական ռիսկի գործոններ:

17. Ապահովագրավճարի վճարման կարգը

Ապահովագրավճարը վճարվում է միանվագ կամ պարբերաբար: Ապահովագրավճարի վճարման կարգը հաստատվում է ապահովագրության պայմանագրով կողմերի համաձայնությամբ: Եթե ապահովագրության պայմանագրում Ապահովագրավճարի վճարումը նախատեսված է պարբերաբար, ապա ապահովագրության պայմանագրում հերթական ապահովագրավճարի չվճարման դեպքում Ապահովագրողի կողմից կարող է սահմանված լինել տույժ:

Եթե ապահովագրական դեպքը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը Ապահովագրողը իրավունք ունի ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվի առնել ապահովագրական վճարի չվճարված գումարը:

18. Ապահովագրական ռիսկի ավելացումը

Ապահովագրվողը պարտավոր է անմիջապես տեղեկացնել Ապահովագրողին բոլոր իրեն հայտնի էական փոփոխությունների մասին ապահովագրությանն ընդունված ապահովագրական ռիսկի վերաբերյալ, որոնք տեղի են ունեցել ապահովագրության գործողության ժամկետի ընթացքում, նույնիսկ եթե նման ապահովագրական ռիսկի փոփոխությունը տեղի է ունենում Ապահովագրվողի կամքից անկախ:

Ապահովագրվողի կողմից սույն կետում նախատեսված պարտականությունների չկատարման դեպքում, Ապահովագրողը մինչև ապահովագրական դեպքի ի հայտ գալը, իրավունք ունի պահանջել ապահովագրական պայմանագրի լուծում և, պայմանագրի լուծարմամբ հասցված վնասների հատուցում, սակայն Ապահովագրողը իրավունք չունի պահանջել ապահովագրության պայմանագրի լուծում, եթե հանգամանքները, որոնք կարող են լինել ռիսկի ավելացման հետևանք, արդեն էական չեն:

19. Էական փոփոխությունները

Ապահովագրական ռիսկերում էական են համարվում ապահովագրական օբյեկտի կամ ապահովագրության օբյեկտին վերաբերվող փոփոխությունները, որոնք նշանակություն ունեն ապահովագրության դեպքի հավանականությունը և հնարավոր վնասների չափը սահմանելու համար, և որոնք, եթե նրանք գոյություն ունենային ապահովագրության պայմանագիրը կնքելու պահին, կկարողանային ապահովագրական պայմանագրի կնքման վերաբերյալ ազդել Ապահովագրողի որոշման վրա կամ ապահովագրության պայմանագրի կոնկրետ պայմանին:

Այն դեպքերում, եթե Ապահովագրվողը կասկածում է, հանդիսանում է արդյոք ապահովագրական ռիսկի փոփոխությունը էական, ապա Ապահովագրվողը պարտավոր է տեղեկացնել Ապահովագրողին այդ փոփոխությունների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ տեղեկություններում էական են համարվում այն փոփոխությունները, որոնք Ապահովագրվողը նշել է իր Դիմումի մեջ և ապահովագրության պայմանագրում այն կնքելիս:

20. Ապահովագրության ռիսկերի փոփոխման հետևանքները

Եթե Ապահովագրողը տեղեկացված է այն հանգամանքների մասին, որոնք կարող են ռիսկի ավելացման հետևանք դառնալ, իրավունք ունի պահանջել գործող ապահովագրության պայմանագրի մեջ փոփոխությունների ներառում կամ լրացուցիչ ապահովագրական վճար ապահովագրական ռիսկի ավելացմանը համապատասխան:

Եթե Ապահովագրվողը դեմ է ապահովագրության պայմանագրում փոփոխությունների ներառմանը կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելուն, ապահովագրողը իրավունք ունի պահանջել ապահովագրական պայմանագրի դադարեցում ՀՀ օրենսդրության համաձայն:

21. Ապահովագրության պայմանագրի փոփոխումները և լրացումները

Ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխությունները և լրացումները հնարավոր է կողմերի համաձայնությամբ: Ապահովագրության պայմանագրում փոփոխությունների և լրացումների կիրառման անհրաժեշտության վերաբերյալ, Ապահովագրվողը պարտավոր է ողջամիտ ժամկետներում գրավոր ձևով տեղեկացնել Ապահովագրողին:

Ապահովագրության պայմանագրում բոլոր փոփոխություններ և լրացումները ձևակերպվում են գրավոր ձևով, դառնում են ապահովագրության պայմանագրի հիմնական մասը և ունեն իրավական հավասար ուժ:

22. Ապահովագրության պայմանագրի լուծումը

Ապահովագրության պայմանագիրը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝

- ա) գործողության ժամկետի ավարտ,
- բ) Ապահովագրողի կողմից իր պարտականությունների կատարում ամբողջ ծավալով,
- գ) իրավաբանական անձ հանդիսացող Ապահովագրվողի լուծարում (եթե չկա իրավահաջորդ), կամ Ապահովագրվողի մահը, որը հանդիսանում է ֆիզիկական անձ,
- դ) Ապահովագրողի լուծարում՝ ՀՀ Օրենսգրքով սահմանված կարգով,
- ե) ապահովագրության պայմանագրի անվավեր ճանաչելը դատարանի կողմից,
- զ) ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմաններով նշված այլ դեպքերում:

23. Ապահովագրության պայմանագրի դադարեցումը

Ապահովագրության պայմանագիրը կարող է դադարեցվել վաղաժամկետ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ կատարելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Բացի այդ՝

Եթե Ապահովագրվողը չի կատարել իր պարտականությունները ըստ ապահովագրության պայմանագրի, ինչպես նաև այլ դեպքերում, նշված գործող օրենսդրությամբ և Պայմաններով, Ապահովագրողը կարող է դադարեցնել ապահովագրության պայմանագիրը՝ տեղեկացնելով Ապահովագրվողին՝ նամակ հղելով դադարեցման մասին նշված ժամկետից ոչ ուշ քան 30 օր առաջ: Այդ դեպքում Ապահովագրողը պարտավոր է վերադարձնել ապահովագրավճարը չլրացված ժամկետի համար՝ մասհանելով կրած վնասները տվյալ ապահովագրության վերաբերյալ:

Ապահովագրվողը իրավունք ունի դադարեցնել ապահովագրության պայմանագիրը տեղեկացնելով Ապահովագրողին նամակով դադարեցման մասին նշված ժամկետից ոչ ուշ քան 30 օր առաջ: Այդ դեպքում Ապահովագրվողը պարտավոր է վճարել ապահովագրավճարը (ապահովագրության պայմանագրի ժամկետի սկզբից մինչև դադարեցման օրը) երկու օրը ներառյալ:

Ապահովագրվողի կողմից ապահովագրության պայմանագրից վաղալկետ հրաժարվելու դեպքում, Ապահովագրողին վճարած ապահովագրական վճարը վերադարձմանը ենթակա չէ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նշված չէ:

Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման կարգը կարող է փոփոխվել և լրացվել ապահովագրության պայմանագրով:

ԲԱԺԻՆ VI. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

24. Ապահովագրողի պարտականությունները

Ապահովագրողը պարտավոր է՝

ա) ծանոթացնել Ապահովագրվողին սույն Պայմաններին, մինչև ապահովագրության պայմանագրի կնքելը,

բ) Ապահովագրվողի կողմից ապահովագրական պայմանագրի կամ վկայագրի կորցնելու դեպքում տրամադրել կրկնօրինակ,

գ) Պայմանների 7-րդ Բաժնի համաձայն՝ Ապահովագրվողի կողմից տրամադրած փաստաթղթերի հիման վրա և պայմանագրով նշված ժամկետում, կազմել ապահովագրական ակտ կամ Ապահովագրվողին հղել նամակ, մերժելով ապահովագրական հատուցման տրամադրումը, ներկայացնելով մերժման պատճառը,

դ) ապահովագրական դեպքի պարագայում կատարել ապահովագրական հատուցում սույն Պայմաններում և ապահովագրական պայմանագրում նշված կարգով, ժամկետում և չափով,

ե) պահպանել Ապահովագրվողի առևտրային գաղտնիքը:

25. Ապահովագրողի իրավունքները

Ապահովագրողը իրավունք ունի՝

ա) ապահովագրության պայմանագիրը կնքելիս զննել Դիմումի մեջ նշված օդանավը և ուսումնասիրել անհրաժեշտ տեղեկություններ,

բ) մասնակցել ապահովագրական դեպքերի հետաքննությանը և կատարել այլ աշխատանք՝ կապված ապահովագրական պայմանագրի գործողության ժամկետի ավարտման հետ,

գ) հարցումներ ուղարկել իրավասու մարմիններին համապատասխան տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրման վերաբերյալ, որոնք հաստատում են ապահովագրական դեպքի և հասցված վնասի չափի փաստը,

դ) նշանակել փորձագետ ապահովագրական հետաքննությունը կատարելու համար, ապահովագրական դեպքի փաստը և վնասի չափը հաստատելու համար,

ե) ապահովագրական հատուցումը վճարելու մերժում տրամադրել սույն Պայմաններում և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում

զ) իրականացնել Ապահովագրի (Շահառուի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

26. Ապահովագրվողի պարտականությունները

Ապահովագրվողը պարտավոր է՝

ա) ժամանակին և սահմանված չափով վճարել ապահովագրական վճարը,

բ) Ապահովագրության պայմանագիրը կնքելիս տեղեկացնել Ապահովագրողին բոլոր իրեն հայտնի հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական ռիսկը սահմանելու համար, ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում տեղեկացնել փոփոխությունների վերաբերյալ,

գ) տեղեկացնել Ապահովագրողին տիրապետման, տնօրինման, տիրակալման իրավունքների, փոփոխությունների վերաբերյալ,

դ) ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի ապահովագրողը հնարավորություն ունենա կատարել հետևյալ միջոցառումները՝ դիտում, օդանավի տեխնիկական սպասարկման և շահագործման պայմանների փորձագիտական զննում, ապահովագրական դեպքերի հետազոտում և այլն՝ կապված ապահովագրական պայմանագրի կնքման հետ և նրա կատարման գործողության ժամկետի ընթացքում,

ե) հետևել աէրոնավիգացիայի, օդանավի թռիչքային և տեխնիկական շահագործման և սպասարկման վերաբերյալ ղեկավարների պահանջներին, պարբերաբար վարել գործող օրենքի պահանջով օդանավի ամբողջ անհրաժեշտ թղթավարությունը, և իր պահանջով ներկայացնել այդ թղթավարությունը Ապահովագրողին կամ իր ներկայացուցչին,

զ) Կատարել օդանավի անվտանգ շահագործման և օդային տեղափոխման ղեկավարման հետ կապված իրավասու մարմինների պաշտոնատար անձանց հրահանգները,

է) պատահարի դեպքում՝

- անմիջապես միջոցներ ձեռնարկել պատահարի հետ կապված վնասների նվազման համար,

- սկսած այն օրից (չհաշված ոչ աշխատանքային և տոն օրերը), երբ նրան հայտնի է դարձել պատահարի և նրա հետևանքով առաջացած վնասների մասին տեղեկացնել Ապահովագրողին գրավոր ձևով երեք օրվա ընթացքում (չհաշված ոչ աշխատանքային և տոն օրերը),

- հայտնել Ապահովագրողին պատահարի վերաբերյալ ամբողջ հետազա տեղեկությունները.

- ձեռնարկել միջոցներ ապահովագրական պատահարի մասին, իրականացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հավաքումը և տրամադրումը Ապահովագրողին, այդ թվում նաև մեղավոր կողմին՝ պահանջի ներկայացման իրավունքի ապահովումը:

27. Ապահովագրվողի իրավունքները

Ապահովագրվողը իրավունք ունի՝

ա) մինչ ապահովագրության պայմանագրի կնքելը ծանոթանալ ապահովագրության Պայմաններին,

բ) իր ցանկությամբ ընտրել Պայմաններում նշված ապահովագրության ծավալը,

գ) ծանոթանալ Ապահովագրողի իրավասությունը և վճարունակությունը հավաստող փաստաթղթերին,

դ) ծանոթանալ ապահովագրական դեպքի հետաքննության ընթացքին,

ե) սույն պայմաններով և օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ:

ԲԱԺԻՆ VII. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

Մաս 1. Օդանավի ամբողջական կորուստ կամ վնաս

28. I մասի գործողությունը

Սույն մասի կանոնները կարգավորում են ավիացիոն ապահովագրության պայմանագրի հարաբերությունները, որոնք ծագում են կապված օդանավի կորստի կամ վնասի հետ՝ ապահովագրված համաձայն II բաժնի կանոնների:

29. Ապահովագրական հատուցման դիմումը

Ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է Ապահովագրողի կողմից Ապահովագրվողի (Շահառուի) ապահովագրական հատուցում ստանալու համար ներկայացված գրավոր դիմումի հիման վրա՝ Ապահովագրողի կողմից կազմված ապահովագրական ակտի և կցված փաստաթղթերի հետ մեկտեղ:

Ապահովագրական հատուցման վճարման դիմումի համար պահանջվում են՝

ա) օդանավի դեպքի գրանցման հետ կապված փաստաթղթերը՝ ներառելով, եթե դա տեխնիկապես հնարավոր է, թռիչքային ինֆորմացիայի և թռիչքային թերթիկի վերծանումը (թռիչքի հանձնարարություն) (բնօրինակը),

բ) վնասից հետո օդանավի զննման տեխնիկական ակտը, իսկ կորստի դեպքում՝ դուրսգրման ակտը (բնօրինակը),

գ) փաստաթղթեր, որոնք հաստատում են Ապահովագրվողի ապահովագրական շահերի առկայությունը և վկայում են օդանավի նկատմամբ Ապահովագրվողի սեփականության (տիրապետման, օգտագործման) իրավունքը կամ հաստատում են օդանավի վնասի կամ կորստի դեպքում դրա սեփականատիրոջ հանդեպ ունեցած պատասխանատվության չափը (բնօրինակը կամ վավերացված պատճենը),

դ) Ապահովագրողի փորձագետների և աշխատանքները իրականացնողների հետ նախապես համաձայնեցված վթարային վերանորոգման նախագիծը և ծախսերի նախահաշիվը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական հատուցման չափի հիմնավորման համար (բնօրինակը),

ե) Այլ փաստաթղթեր, որոնք վերաբերում են ապահովագրական պատահարին և փաստացի վնասին (վճարման փաստաթղթեր, ծառայությունների և աշխատանքների պայմանագրեր, անձնակազմի թռիչքների ցուցակ և այլն), որոնք պահանջում է Ապահովագրողը:

30. Ապահովագրական ակտը

Ապահովագրական ակտը կազմվում և հաստատվում է Ապահովագրողի կողմից ապահովագրական պայմանագրով սահմանված ժամկետներում, Ապահովագրողի կողմից վերը թվարկված փաստաթղթերը ստանալուց հետո:

31. Ապահովագրական հատուցման վճարման ժամկետը

Ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է Ապահովագրողի կողմից ապահովագրական ակտը հաստատելուց հետո 30-օրյա ժամկետում:

32. Ապահովագրական հատուցումը լրիվ կորստի դեպքում

Օդանավի լրիվ կորստի դեպքում Ապահովագրողը իր ընտրությամբ կամ իրականացնում է ապահովագրական հատուցման վճարումը ապահովագրական գումարի չափով կամ Ապահովագրվողին տրամադրում է այլ փոխարինող օդանավ: Ընդ որում,

ա) ապահովագրողի կողմից առաջարկվող օդանավը պետք է լինի նույն տիպի (մոդելի), լինի փոխարինվող օդանավի նույն վիճակում (պլանյորի և շարժիչների ռեսուրս, այլ շահագործատեխնիկական բնութագրեր),

բ) ապահովագրական հատուցման վճարումը իրականացնելուց հետո Ապահովագրողը իրավունք է ստանում դառնալ դուրս գրված օդանավի և դրա ցանկացած ագրեգատների(մասերի) սեփականատերը՝ բոլոր գրանցման և տիրապետման իրավունք տվող փաստաթղթերի հետ միասին,

գ) եթե Ապահովագրողը չի որոշում դառնալ օդանավի կամ դրա մնացորդների սեփականատերը, ապա Ապահովագրվողը միակողմանի իրավունք չունի հրաժարվել վնասված օդանավից ի օգուտ Ապահովագրողի, և այդ դեպքում այն մնում է Ապահովագրվողի

սեփականությունը, իսկ Ապահովագրողը իրականացնում է ապահովագրական հատուցման վճարումը ապահովագրական գումարի չափով:

33. Ապահովագրական հատուցումը կառուցվածքային կորստի դեպքում

Կառուցվածքային կորստի դեպքում Ապահովագրողը իր ընտրությամբ կամ իրականացնում է ապահովագրական հատուցման վճարումը ապահովագրական գումարի չափով և ստանում է վնասված օդանավի մնացորդների իրացումից հասույթի իրավունք կամ վճարում է ապահովագրական գումարի և օդանավի մնացորդների արժեքի տարբերությունը:

Եթե ապահովագրական պայմանագրով սահմանված օդանավի ապահովագրական գումարը փոքր է ապահովագրական արժեքից ապա օդանավի մնացորդների արժեքի գնահատման դեպքում կիրառվում են 52 և 53 կետերի դրույթները:

34. Ապահովագրական հատուցումը օդանավի վնասի դեպքում

Օդանավի վնասման դեպքում սարքավորումների ապամոնտաժման, տեղափոխման և վերանորոգման ոչ մի աշխատանքներ չպետք է սկսվեն առանց Ապահովագրողի համաձայնության, բացառությամբ եթե դա անհրաժեշտ է անվտանգության պահպանման, օդանավի հետագա վնասի կանխման համար կամ ստիպողաբար համապատասխան ղեկավար մարմինների հրամանների կատարումով:

35. Վերանորոգման ծախսերը

Օդանավի վնասման դեպքում, եթե ապահովագրական գումարը հավասար է օդանավի ապահովագրական արժեքին ապա Ապահովագրողը համեմատաբար տնտեսման ճանապարհով վճարում է օդանավի վերանորոգման հետևյալ ծախսերը՝

ա) Ապահովագրվողի վթարային վերանորոգման փաստացի ծախսերը, այդ թվում՝

- օժանդակ նյութերի և պահեստային մասերի, գործիքների, վառելիքի, քսանյութերի ձեռք բերման ծախսերը, վերահսկում, օդանավի փորձարկումը օդանավի նշանակված տեխնիկական ռեսուրսի չմշակված մասի հարաբերակցությունը այս ռեսուրսին որևէ մի պարամետրով, որն ունի համեմատաբար ավելի մեծ վերամշակում ապահովագրական պատահարի ի հայտ գալու պահին,

- գործարանային պայմաններում վերանորոգված կամ փոխարինված յուրաքանչյուր ագրեգատի վերանորոգման ծախսերը, այդ ագրեգատների վնասի պատճառով չաշխատած ռեսուրսի (ժամերի, ցիկլերի, վայրէջքների) համամասնությամբ միջվերանորոգման ռեսուրսի սահմաններում,

բ) վնասված օդանավի անվտանգության և պահպանման ապահովման ծախսերը,

գ) վնասված օդանավի գտնվելու վայր աշխատողների, նյութերի, պահեստային մասերի և ագրեգատների տեղափոխման ծախսերը, ինչպես նաև թռիչքը դեպի վայրից բազային աէրոդրոմ (վերանորոգման կազմակերպություն),

դ) օդանավի մասնատման ծախսերը այն դեպքում, երբ այն անհաղթահարելի ուժի կամ սխալմունքի հետևանքով իրականացրել է վայրէջք այնպիսի մի վայրում, որտեղից հնարավոր չէ թռիչք կատարել, նաև խելամիտ ծախսերը կապված բազային աէրոդրոմ կամ պատահարի վայրին ամենամոտ աէրոդրոմ վերադարձնելու հետ, որտեղ հնարավոր է շահագործել օդանավը, կախված այն բանից, թե որ տարբերակն է ամենանպատակայինը,

ե) թռիչքների իրականացման՝ ծախսերը կապված օդանավի պիտանելիության վկայականի վերականգնման հետ,

Կետեր բ) և ե)-ում նշված ծախսերը Ապահովագրողի կողմից հատուցվում են այն դեպքում, եթե դրանք նպատակային են, կատարված են տնտեսման սկզբունքով և ապահովագրական գումարի 10%-ը չգերազանցող չափով:

36. Ոչ լրիվ ապահովագրությունը

Այն դեպքում, երբ ապահովագրական գումարը փոքր է օդանավի ապահովագրական արժեքից, ապա սույն Պայմանների 51 կետի համաձայն ապահովագրական հատուցման չափը կրճատվում է այնքան անգամ, որքան ապահովագրական արժեքը մեծ է ապահովագրական գումարից:

37. Օդանավի բաղկացուցիչ մասերի արժեքի տեսակարար կշիռը ապահովագրական գումարի մեջ Պայմանագրով կարող է սահմանված լինել օդանավի յուրաքանչյուր մասի ապահովագրական հատուցման առավելագույն չափը՝ ելնելով ապահովագրական գումարի մեջ օդանավի բաղկացուցիչ մասերի արժեքի տեսակարար կշռից: Տեսակարար կշռի չափը որոշվում է կողմերի համաձայնությամբ:

38. Ապահովագրական հատուցման գումարից հանվում է պայմանագրում նշված ֆրաշիզայի գումարը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ և Ապահովագրվողի կողմից չվճարված ապահովագրավճարի մի մասը, եթե ապահովագրական պայմանագրով նախատեսված է ապահովագրավճարի վճարումը մաս-մաս:

39. Ապահովագրվողի կողմից վնասված օդանավի պահպանման համար խելամիտ և մատչելի միջոցառումների չձեռնարկման դեպքում Ապահովագրողը իրավունք ունի նվազեցնել ապահովագրական հատուցման չափը Ապահովագրվողի կողմից իրականացրած գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացած լրացուցիչ վնասի գումարի չափով:

40. Ապահովագրվողի կողմից Ապահովագրողին վնասի համար մեղավոր անձանց նկատմամբ սուբրոգացիայի իրավունքի փոխանցման ապահովման համար խելամիտ և մատչելի միջոցառումների չձեռնարկման դեպքում, Ապահովագրողը ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց ամբողջությամբ կամ համապատասխան մասով և իրավունք ունի հետ պահանջել ավել վճարած ապահովագրական գումարը:

41. Ապահովագրական հատուցման գումարի մեջ չեն ներառվում՝

ա) օժանդակ ծախսերը (բաց թողնված եկամուտը, տույժերը, հետաձգման կամ ուշացման հետևանքով առաջացած ծախսերը, օդանավի պարապուրդը, տեղափոխման պայմանագրի խախտումը, դադարեցումը, պայմանագրային տույժերը և այլն),

բ) կորցրած եկամուտը կամ լրացուցիչ ծախսերը՝ կապված ապահովագրված օդանավի կամ նրա առանձին ագրեգատի շահագործման անհնարինության հետ ապահովագրական պատահարից հետո,

գ) օդանավի մնացորդների մաքրման և ուտիլիզացիայի հետ կապված ծախսերը,

դ) օդանավի անհետ կորելու դեպքում փնտրողական աշխատանքների վրա կատարված ծախսերը,

ե) օդանավի վերազինման, մոդեռնիզացման, վերամշակման ծախսերը, նաև ապահովագրական պատահարի հետ կապ չունեցող վնասվածքների վերանորոգման վրա կատարված ծախսերը, բայց հայտնաբերված ապահովագրական պատահարի հետ կապված վթարային աշխատանքների իրականացման ժամանակ,

զ) Ապահովագրվողի կողմից վնասի հատուցման հետ կապված ծախսերը,

է) ՀՀ Օրենսդրությամբ նախատեսված այլ գումարներ,

զ) և դ) կետերում նշված ծախսերը կարող են ապահովագրվել «Լրացուցիչ ծախսերի փոխհատուցման դրույթ» LSW 705-ին համապատասխան (գլուխ 2):

42. Ապահովագրական գումարի միասնությունը

Օդանավի վնասման դեպքում ապահովագրական գումարը այդ օդանավի հարաբերակցությամբ կրճատվում է ապահովագրական հատուցման գումարի չափով, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Անկախ շահառուների քանակից, որոնց օգտին կնքված է օդանավի ապահովագրության պայմանագիրը, ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը սահմանափակվում է ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարով:

43. Վնասի փոխհատուցումը

Այն դեպքում, երբ Ապահովագրվողին հասցված վնասը փոխհատուցվել է այլ անձանց կողմից, Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրության պայմանագրով փոխհատուցման ենթակա գումարի և այլ անձանց կողմից փոխհատուցված գումարի միջև տարբերությունը:

Նման փոխհատուցումների մասին Ապահովագրողը պարտավոր է հայտնել Ապահովագրողին նաև այն դեպքերում, երբ նման փոխհատուցումները նրա կողմից կստացվեն Ապահովագրողից ապահովագրական հատուցումը ստանալուց հետո և/կամ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

44. Կրկնակի ապահովագրությունը

Այն դեպքում երբ Ապահովագրվողը օդանավի ապահովագրության պայմանագրեր է կնքել մի քանի Ապահովագրողների հետ օդանավի ապահովագրական արժեքը գերազանցող ապահովագրական գումարով (կրկնակի ապահովագրություն), ապա այս դեպքում յուրաքանչյուր Ապահովագրողի կողմից վճարվելիք ապահովագրական հատուցման գումարը կրճատվում է համապատասխան ապահովագրական պայմանագրի սկզբնական ապահովագրական գումարի փոքրացման համամասնությամբ:

45. Չհիմնավորված հարստացումը

Այն դեպքում, երբ ապահովագրական հատուցումը վճարելուց հետո հայտնաբերվեն այնպիսի հանգամանքներ, որոնք սույն Պայմաններով Ապահովագրվողին զրկում են ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից, նա պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել նրանից ստացած գումարը:

Մաս 2. Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվություն

46. II մասի գործողությունը

Սույն մասի կանոնները կարգավորում են ավիացիոն ապահովագրության պայմանագրի հարաբերությունները, որոնք առաջանում են ապահովագրության պայմանագիր կնքած Ապահովագրվողի պատասխանատվության առաջացման հետ՝ կապված համաձայն III բաժնի կանոնների:

47. Ապահովագրական հատուցման վճարման համար դիմումը

Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է Ապահովագրվողի (Շահառուի) կողմից տրված ապահովագրական հատուցման վճարման գրավոր դիմումի, կցված փաստաթղթերի և Ապահովագրողի կողմից կազմված ապահովագրական ակտի հիման վրա:

Ապահովագրական հատուցման վճարման դիմումին կցվում են՝

ա) Ապահովագրվողին տուժող անձանց կողմից վնասի հատուցման համար ներկայացրած պահանջները (բնօրինակը),

բ) ապահովագրական պոլիսը կամ ապահովագրության պայմանագիրը (բնօրինակը կամ վավերացված պատճեն),

գ) հասցված վնասի փոխհատուցման վերաբերյալ դատական մարմինների որոշումները (եթե գործը քննարկվում էր դատական կարգով) (բնօրինակը),

դ) փաստաթղթեր, որոնք հաստատում են հայցվորների ժառանգության իրավունքը (բնօրինակը կամ վավերացված պատճեն),

ե) անձը հաստատող փաստաթղթեր (վավերացված պատճեն),

զ) ապահովագրական պատահարի առաջացման հանգամանքներին և պատճառած վնասի փաստացի չափին վերաբերող Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր, այդ թվում՝ օդանավի հետ կապված պատահարի գրանցման փաստաթղթերը, պատահարի հետաքննության արդյունքների հիման վրա հանձնաժողովի հաշվետվությունը ներառյալ, եթե դա տեխնիկապես հնարավոր է, թռիչքային ինֆորմացիայի ապակողմավորումը և թռիչքային թուղթը (թռիչքի հանձնարարությունը) և այլն (բնօրինակը):

48. Երրորդ անձի կամ ուղևորի կյանքին և առողջությանը հասցված վնասը

Երրորդ անձի կամ ուղևորի կյանքին և առողջությանը վնաս հասցնելու դեպքում ապահովագրության դիմումին լրացուցիչ կցվում են՝

ա) հասցված վնասի փաստը և չափը հավաստող փաստաթղթեր (դժբախտ պատահարի վերաբերյալ ակտեր, բժշկական հաստատությունների կողմից տրված տեղեկանքներ, այլ բժշկական փաստաթղթեր, որոնք հաստատում են կյանքին և առողջությանը հասցված վնասը, բժշկական ծառայությունների վճարման հաշիվներ և այլն) (բնօրինակ),

բ) ուղևորի օդային տեղափոխման պայմանագրի առկայությունը հավաստող փաստաթղթեր(տոմս) (բնօրինակ):

49. Ուղևորի գույքին, բեռին և փոստին հասցված վնասը

Ուղևորի գույքին, բեռին և փոստին վնաս հասցնելու դեպքում ապահովագրության դիմումին լրացուցիչ կցվում են՝

ա) հասցված վնասի փաստը և չափը հավաստող փաստաթղթեր (կոմերցիոն ակտեր, վերադիրներ, հիմնական միջոցների գրքերից գրանցումներ, վճարման փաստաթղթեր, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման պայմանագրեր, գույքի անկախ գնահատման ակտեր և այլն) (բնօրինակ),

բ) փաստաթղթեր, որոնք հավաստում են օդային տեղափոխման պայմանագրի առկայությունը ուղևորի համար (տոմս և ուղեբեռի կտրոն), բեռի համար (բեռի վերադիր) կամ փոստի համար (փոստային վերադիր) (բնօրինակ):

50. Երրորդ անձանց գույքին հասցված վնասը

Երրորդ անձանց գույքին վնաս հասցնելու դեպքում լրացուցիչ ներկայացվում են հասցված վնասի փաստը և չափը հավաստող փաստաթղթեր (կոմերցիոն ակտեր, վերադիրներ, հիմնական միջոցների գրքերից դուրսգրումներ, վճարման փաստաթղթեր, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման պայմանագրեր, գույքի անկախ գնահատման ակտեր և այլն) (բնօրինակ):

51. Ապահովագրական ակտը

Ապահովագրական ակտը կազմվում և հաստատվում է Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում՝ բոլոր վերը թվարկած փաստաթղթերը Ապահովագրողի կողմից ստանալուց հետո:

Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում Ապահովագրողի կողմից ապահովագրական ակտը հաստատելուց հետո:

52. Ապահովագրական հատուցման կազմը

Ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովագրողը կհատուցի՝

ա) տուժող անձանց կյանքին և առողջությանը վնաս հասցնելու դեպքում՝

- աշխատավարձը, որից տուժող անձը զրկվել էր հիմնական կամ ժամանակավոր աշխատունակության կորստի հետևանքով կյանքին և առողջությանը՝ հասցված վնասի պատճառով աշխատունակության կորստի ողջ ժամկետի համար,

- տուժող կողմի առողջության վերականգնման համար լրացուցիչ ծախսերը (ուժեղացված սննդի, սանատորաառողջարանային բուժման, կողմնակի խնամքի, պրոթեզավորման, տրանսպորտային ծախսերի և այլնի),

- աշխատավարձի այն մասը, որից տուժող անձի մահվան դեպքում զրկվում են անաշխատունակ անձիք, որոնք գտնվում էին նրա խնամակալության տակ կամ նրանից ժառանգություն ստանալու իրավունք ունեին այն ժամկետում, որը սահմանվում է ՀՀ և այն երկրների օրենսդրությամբ, որոնց տարածքներում Ապահովագրողին վնաս է հասցվել,

- տուժող անձի մահվան դեպքում թաղման ծախսերը,

բ) տուժող անձանց գույքին վնաս հասցնելու դեպքում՝

- գույքի ամբողջական կորստի դեպքում՝ պատահարը տեղի ունենալու պահին դրա գտնվելու վայրում դրա իրական արժեքի չափով,

- գույքի վնասման դեպքում՝ այն ծախսերի չափով, որն անհրաժեշտ է գույքը այն վիճակին բերելու, որում այն գտնվում էր մինչև վնասվելու պահը:

53. Լրացուցիչ ծախսերը

Ապահովագրողը վճարում է բոլոր իրավաբանական և դատական ծախսերը, որոնք կատարել է Ապահովագրվողը Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ, կապված Ապահովագրվողին վնասի հատուցման ներկայացրած պահանջների կարգավորման հետ, եթե սույն Պայմաններին համաձայն հասցված վնասը հատուցվում է կամ կհատուցվեր:

Եթե վնասի հատուցման պահանջի գումարը գերազանցում է ապահովագրական գումարը, ապա նշված ծախսերը ենթակա են հատուցման այն համամասնությամբ, որով ապահովագրական գումարը հարաբերվում է վճարման ենթակա պահանջների գումարին, անկախ նրանից, որ ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը կարող է գերազանցել ապահովագրական գումարը:

54. Հատուցման գումարից մասհանումները

Ապահովագրական գումարից հանվում են ապահովագրական պայմանագրով սահմանված ֆրանշիզան, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ և կարող է հանվել նաև Ապահովագրվողի կողմից ապահովագրավճարի չվճարած մասը, եթե ապահովագրության պայմանագրով սահմանված է ապահովագրավճարի վճարումը մաս-մաս:

55. Ապահովագրական հատուցման գումարի մեջ չեն մտնում՝

ա) Ապահովագրվողի, նաև տուժող անձանց օժանդակ ծախսերը (բաց թողնված օգուտը, ուշացման տույժերը և ուշացման հետևանքով վնասները, օդանավի պարապյուրոները, խախտումները, տեղափոխման պայմանագրի դադարեցումը, պայմանագրային և օրինական տույժեր և այլն),

բ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գումարներ:

56. Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը մեկ կամ մի քանի ապահովագրական դեպքեր տեղի ունենալու դեպքում սահմանափակվում է ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Անկախ անձանց թվից, ովքեր կարող են վնասի հատուցման պահանջ ներկայացնել, անձիք, ում պատասխանատվությունը ապահովագրված է ապահովագրության պայմանագրով ներկայացրած վնասի հատուցման պահանջի քանակը և գումարը,

ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը սահմանափակվում է ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարով և հատուցման սահմաններով:

57. Փոխհատուցումը

Այն դեպքում, երբ տուժող կողմին հասցված վնասը փոխհատուցվում է այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրական պայմանագրով հատուցման ենթակա գումարի և այլ անձանց կողմից փոխհատուցված գումարի տարբերությունը: Նման փոխհատուցումների մասին Ապահովագրվողը պարտավոր է հայտնել Ապահովագրողին նաև այն դեպքերում, երբ նման փոխհատուցումները ստացվել են նրա կողմից Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարելուց հետո և/կամ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

58. Ապահովագրական հատուցման վճարման կարգը

Սույն Պայմաններին համապատասխան՝ նախատեսվում է ապահովագրական հատուցման վճարման իրականացման հետևյալ կարգը՝

Ապահովագրվողի համաձայնությամբ ապահովագրական հատուցման վճարումը կարող է իրականացվել անմիջապես Շահառուին, եթե ապահովագրության պայմանագրով կամ օրենքով այլ բան նախատեսված չէ:

Այն դեպքում, երբ Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովագրվողը հատուցել է Շահառուին հասցված վնասը իր հաշվին, Ապահովագրողը կիրականացնի ապահովագրական հատուցման վճարումը Ապահովագրվողին՝ վերջինիս կողմից փաստաթղթերը ներկայացնելուց հետո, որոնք հաստատում են իր կողմից իրականացրած վճարումները այն կարգով, որով փոխհատուցվել են պատճառված վնասները:

Եթե ապահովագրական հատուցման վճարումը Ապահովագրողի կողմից չի իրականացվել սահմանված ժամկետներում, ապա Ապահովագրողը Ապահովագրվողին (Շահառուին) վճարում է տույժ ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և չափով:

Մաս 3. Ավիաընկերության պատասխանատվություն՝ կապված թռիչքային առաջադրանքի ընթացքում թռիչքային և աշխատանքային պարտականություններ կատարելու ժամանակ թռիչքային և ինժեներատեխնիկական անձնակազմերի կյանքին և առողջությանը հասցված վնասի հետ

59. III մասի գործողությունը

Սույն մասի կանոնները կարգավորում են ավիացիոն ապահովագրության պայմանագրի հարաբերությունները, որոնք առաջանում են ապահովագրության պայմանագիր կնքած Ապահովագրվողի պատասխանատվության առաջացման հետ կապված՝ համաձայն 4-րդ բաժնի կանոնների:

60. Ապահովագրական հատուցման վճարման համար դիմումը

Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցման վճարումը իրականացվում է Ապահովագրվողի (Շահառուի) կողմից տրված ապահովագրական հատուցման վճարման գրավոր դիմումի, կցված փաստաթղթերի և Ապահովագրողի կողմից կազմված ապահովագրական ակտի հիման վրա:

Ապահովագրական հատուցման վճարման դիմումին կցվում են.

ա) Ապահովագրվողին տուժող անձանց կողմից վնասի հատուցման համար ներկայացրած պահանջները (բնօրինակը),

բ) ապահովագրական պոլիսը կամ ապահովագրության պայմանագիրը (բնօրինակը կամ վավերացված պատճեն),

գ) հասցված վնասի փոխհատուցման վերաբերյալ դատական մարմինների որոշումները (եթե գործը քննարկվում էր դատական կարգով) (բնօրինակը),

դ) փաստաթղթեր, որոնք հաստատում են հայցվորների իրավունքը՝ պատճառված վնասի հատուցումը ստանալու (բնօրինակը կամ վավերացված պատճեն),

ե) անձը հաստատող փաստաթղթեր (վավերացված պատճեն)

զ) ապահովագրական պատահարի առաջացման հանգամանքներին և պատճառած վնասի փաստացի չափին վերաբերող Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր, այդ թվում օդանավի հետ կապված պատահարի գրանցման փաստաթղթերը, պատահարի հետաքննության արդյունքների հիման վրա հանձնաժողովի հաշվետվությունը՝ ներառյալ եթե դա տեխնիկապես հնարավոր է, թռիչքային ինֆորմացիայի ապակողավորումը և թռիչքային թուղթը (թռիչքի հանձնարարությունը) և այլն (բնօրինակը):

է) հասցված վնասի փաստը և չափը հավաստող փաստաթղթեր (դժբախտ պատահարի վերաբերյալ ակտեր, բժշկական հաստատությունների կողմից տրված տեղեկանքներ, այլ բժշկական փաստաթղթեր, որոնք հաստատում են կյանքին և առողջությանը հասցված վնասը, բժշկական ծառայությունների վճարման հաշիվներ և այլն) (բնօրինակ):

61. Ապահովագրական ակտը

Ապահովագրական ակտը (սերտիֆիկատը) կազմվում է և հաստատվում Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում՝ բոլոր վերը թվարկված փաստաթղթերը Ապահովագրողի (Շահահռուի) կողմից ստանալուց հետո:

Ապահովագրական հատուցման վճարումը կատարվում է ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետում Ապահովագրողի կողմից ապահովագրական ակտը հաստատելուց հետո:

62. Ապահովագրական հատուցման կազմը

Ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովագրողը կհատուցի.

- աշխատավարձը, որից տուժող անձը զրկվել էր հիմնական կամ ժամանակավոր աշխատունակության կորստի հետևանքով կյանքին և առողջությանը հասցված վնասի պատճառով աշխատունակության կորստի ողջ ժամկետի համար.
- տուժող կողմի առողջության վերականգնման համար լրացուցիչ ծախսերը (ուժեղացված սննդի, սանատորաառողջարանային բուժման, կողմնակի խնամքի, պրոթեզավորման, տրանսպորտային ծախսերի և այլնի).
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, չափով և ժամկետով աշխատավարձի այն մասը, որից տուժող անձի մահվան դեպքում զրկվում են հատուցման իրավունք ունեցող անձինք, որոնք գտնվում էին նրա խնամակալության տակ, որը սահմանվում է ՀՀ և այն երկրների օրենսդրությամբ, որոնց տարածքներում տուժող անձանց վնաս է հասցվել.
- տուժող անձի մահվան դեպքում թաղման ծախսերը:

63. Լրացուցիչ ծախսերը

Ապահովագրողը վճարում է բոլոր իրավաբանական և դատական ծախսերը, որոնք կատարել է Ապահովագրվողը Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ, կապված

Ապահովագրվողին վնասի հատուցման ներկայացրած պահանջների կարգավորման հետ, եթե սույն Պայմաններին համաձայն, հասցված վնասը հատուցվում է կամ կհատուցվեր:

Եթե վնասի հատուցման պահանջի գումարը գերազանցում է ապահովագրական գումարը, ապա նշված ծախսերը ենթակա են հատուցման այն համամասնությամբ, որով ապահովագրական գումարը հարաբերվում է վճարման ենթակա պահանջների գումարին, անկախ նրանից, որ ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը կարող է գերազանցել ապահովագրական գումարը:

64. Հատուցման գումարից մասհանումները

Ապահովագրական գումարից հանվում են ապահովագրական պայմանագրով սահմանված ֆրանշիզան, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ, և կարող է հանվել նաև Ապահովագրվողի կողմից ապահովագրավճարի չվճարած մասը, եթե ապահովագրության պայմանագրով սահմանված է ապահովագրավճարի վճարումը մաս-մաս:

65. Ապահովագրական հատուցման գումարի մեջ չեն մտնում.

ա) Ապահովագրվողի, նաև տուժող անձանց օժանդակ ծախսերը (բաց թողնված օգուտը, ուշացման տույժերը և ուշացման հետևանքով վնասները, օդանավի պարապյուրոները, խախտումները, տեղափոխման պայմանագրի դադարեցումը, պայմանագրային և օրինական տույժեր և այլն) .

66. ք) ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ գումարներ:

67. Ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը մեկ կամ մի քանի ապահովագրական դեպքեր տեղի ունենալու դեպքում սահմանափակվում է ապահովագրական պայմանագրով սահմանված ապահովագրական գումարով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Անկախ անձանց թվից, ովքեր կարող են վնասի հատուցման պահանջ ներկայացնել, ներկայացրած վնասի հատուցման պահանջի քանակից և գումարից, ապահովագրական հատուցման ընդհանուր գումարը սահմանափակվում է ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարով և հատուցման սահմաններով:

68. Փոխհատուցումը

Այն դեպքում, երբ տուժող կողմին հասցված վնասը փոխհատուցվում է այլ անձանց կողմից, ապա Ապահովագրողը վճարում է միայն ապահովագրական պայմանագրով հատուցման ենթակա գումարի և այլ անձանց կողմից փոխհատուցված գումարի տարբերությունը: Նման փոխհատուցումների մասին Ապահովագրվողը պարտավոր է հայտնել Ապահովագրողին, նաև այն դեպքերում, երբ նման փոխհատուցումները ստացվել են նրա կողմից Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը վճարելուց հետո և/կամ ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո:

69. Ապահովագրական հատուցման վճարման կարգը

Սույն Պայմաններին համապատասխան նախատեսվում է ապահովագրական հատուցման վճարման իրականացման հետևյալ կարգը.

Ապահովագրվողի համաձայնությամբ ապահովագրական հատուցման վճարումը կարող է իրականացվել անմիջապես Շահառուին, եթե ապահովագրության պայմանագրով կամ օրենքով այլ բան նախատեսված չէ:

Այն դեպքում, երբ Ապահովագրողի համաձայնությամբ Ապահովագրվողը հատուցել է Շահառուին հասցված վնասը իր հաշվին, Ապահովագրողը կիրականացնի ապահովագրական հատուցման վճարումը Ապահովագրվողին՝ վերջինիս կողմից

փաստաթղթերը ներկայացնելուց հետո, որոնք հաստատում են իր կողմից իրականացրած վճարումները այն կարգով, որով փոխհատուցվել են պատճառված վնասները:

ԲԱԺԻՆ VIII. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

70. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու, Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Շահառուին՝ ապահովագրության պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

71. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Շահառուի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և(կամ) ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ծայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Շահառուի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

72. Կետ 85-ում նշված Ապահովադրի (Շահառուի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Ապահովագրության պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն

համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Շահառուի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

73. Ապահովադրից (Շահառուից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Շահառուի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Շահառուի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

74. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Շահառուն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 85-րդ կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Շահառուն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ VIII. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

75. Բոլոր այն պայմանները, որոնք սույն Պայմաններով նախապես նշված չեն և համաձայնեցված չեն կողմերի միջև, լրացուցիչ կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

76. Ապահովագրության պայմանագրի բոլոր վեճերը դիտվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ դատարանում ըստ պատասխանողի գտնվելու վայրի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 2.

**ԲԱԺԻՆ X. ԿԻՐԱՌՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ,
ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ԻՆԴՈՍԱՄԵՆՏՆԵՐ**

Պատասխանատվության սահմանափակում

(համատեղ ապահովագրվածներ)

Հավաստագրի կամ այլ փաստաթղթի հիման վրա մեկից ավելի ապահովագրվող ընդգրկվելու դեպքում, ապահովագրողների ընդհանուր պատասխանատվությունը յուրաքանչյուր կամ բոլոր ապահովագրվողների հանդեպ չպետք է գերազանցի սույն վկայագրում նշված պատասխանատվության սահմանը:

2AVN14

(01.10.96)

Ապահովագրական վճարի վճարում

1. Հայտնի է և պայմանավորված, որ ապահովագրական վճարը տվյալ վկայագրի գործողության սկզբից հետո պետք է վճարվի հետևյալ մասերով՝

եռամսյակային հավասար վճարումներով՝ ապահովագրության պայմանագրի պայմաններին համապատասխան:

2. Սույն վկայագրի համաձայն՝ վճարված ապահովագրական պարգևի մասերը գերազանցող վնասի դեպքում, ապահովագրական վճարի չվճարված մասերը անհապաղ պետք է վճարվեն:

3. Անկախ վկայագրում առկա կանցեյացիալի վերաբերյալ ցանկացած դրույթներից, եթե դրամական պարգևի որևէ մաս սահմանված ժամկետում վճարված չէ, Ապահովագրողները իրավունք կունենան դադարեցնել նշված վկայագրով Ապահովագրվողին և տվյալ վկայագրով պաշտպանվող ցանկացած այլ կողմին տրամադրվող ծածկույթը հաստատման միջոցով կամ այլ կերպ՝ նշանակված բրոքերին գրավոր ձևով ծանուցում հանձնելով ոչ ավել քան երեսուն (30) օր առաջ: Ծանուցումը համարվում է ուժի մեջ մտած Ապահովագրողի կողմից այն տրման օրվանից:

AVN 6A

(01.10.96)

**Լրացուցիչ օդանավերի ապահովագրության և օդանավի ապահովագրության
պայմանագրից օդանավերի հանում**

1. Սույն Դրույթի համաձայն, լրացուցիչ ապահովագրական պարգևի վճարման դեպքում, որը հաշվարկվում է համամասնորեն՝ անհրաժեշտ ժամկետին համապատասխան, գործող ապահովագրության պայմանագրի պայմանների համաձայն և դրա գործունեության

ժամանակահատվածում, կարող են ապահովագրվել նաև գործող ապահովագրական պայմանագրով ավելի վաղ ապահովագրված օդանավերին նույնանման լրացուցիչ օդանավեր (որոնք պատկանում են կամ շահագործվում են Ապահովագրվողի կողմից):

2. Այլ տիպի կամ այլ արժեքի լրացուցիչ օդանավ ապահովագրելու համար պահանջվում է Ապահովագրողի նախնական համաձայնությունը և ապահովագրական սակագնի որոշումը (ապահովագրական պարզևի չափը)՝ մինչ տվյալ օդանավի ապահովագրության սկիզբը:

3. Եթե օդանավը վաճառվում կամ հանվում է շահագործումից, Ապահովագրողը իրավունք ունի այդ օդանավի մասով դադարեցնել ապահովագրական պայմանագիրը և վերադարձնել ապահովագրական պարզևը չլրացած ապահովագրության ժամկետի համար համամասնորեն, այն դեպքում, երբ նա չի հայտնել ապահովագրական վճարի մասին և եթե ապահովագրական պայմանագիրը ինքնաբերաբար չի դադարեցվում՝ կապված այդ օդանավը ապահովագրական պայմանագրից բացառելու հետ:

4. Գործող ապահովագրական պայմանագրի պայմաններին համապատասխան ապահովագրված յուրաքանչյուր լրացուցիչ օդանավի համար ապահովագրական վճարը հաշվարկվում է ապահովագրության փաստացի ժամանակահատվածի համար համամասնորեն, բայց ոչ պակաս, քան 15 օրվա համար:

5. Սույն Պայմանների 1 և 3 կետերի համաձայն՝ որևէ լրացուցիչ օդանավ ապահովագրելու մասին դիմումը կամ գործող ապահովագրական պայմանագրից որևէ օդանավի բացառման մասին ծանուցումը Ապահովագրվողը պարտավոր է գրավոր ուղարկել Ապահովագրողին՝ գործող ապահովագրական պայմանագրում ընդգրկելու կամ դրանից բացառելու պահից ոչ պակաս քան մեկ օր առաջ:

AVN 17A

(01.10.96.)

Ապահովագրության մեջ նոր ընդգրկվող օդանավերի մասով քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության և պայմանագրից հանված օդանավերի մասով ապահովագրության պայմանագրի գործունեության դադարեցում

1. Համաձայն սույն Պայմանների՝ ապահովագրության համար անհրաժեշտ ժամկետին համամասնորեն հաշվարկված լրացուցիչ ապահովագրական վճարի վճարման պայմանով, Ապահովագրողը գործող ապահովագրության պայմանագրի պայմանների հիման վրա, գործող ապահովագրության ժամանակամիջոցի ընթացքում իրավունք ունի ապահովագրել իր քաղաքացիական պատասխանատվությունը՝ նոր ընդգրկված օդանավերի շահագործման, օդային տեղափոխումներ իրականացնելու կամ ավիացիոն աշխատանքներ կատարելու ժամանակ նոր ընդգրկված օդանավերի մասով, պայմանով, որ այդպիսի օդանավերը (որոնք պատկանում են Ապահովագրվողին կամ շահագործվում են Ապահովագրվողի կողմից) կլինեն նույն տիպի, ինչ արդեն իսկ ապահովագրված օդանավերը:

2. Ապահովագրության պայմանագրի մեջ նոր ընդգրկված մեծ ուղևորատարողությամբ օդանավի շահագործման, օդային փոխադրումների իրականացման կամ ավիացիոն աշխատանքների կատարման ընթացքում քաղաքացիական պատասխանատվության գործող պայմանագրի պայմաններին համապատասխան ապահովագրման համար պահանջվում է Ապահովագրողի նախնական համաձայնությունը և մինչ ապահովագրումը նրա կողմից ապահովագրական սակագնի /ապահովագրական վճարի չափը/ սահմանումը:

3. Եթե օդանավը վաճառվում է կամ հանվում է շահագործումից, Ապահովագրվողն իրավունք ունի ժամկետից շուտ դադարեցնել ապահովագրական պայմանագիրը այդ օդանավի մասով շահագործման, օդային փոխադրումների իրականացման կամ ավիացիոն աշխատանքների կատարման ընթացքում քաղաքացիական պատասխանատվության ապահովագրման վերաբերյալ, ինչպես նաև իրավունք ունի հետ ստանալու ապահովագրական պայմանագրի գործողության չլրացված ժամկետին համապատասխան ապահովագրական վճարը:

4. Ապահովագրական պայմանագրի մեջ նոր ընդգրկված օդանավերի մասով քաղաքացիական պատասխանատվության ապահովագրման դիմաց ապահովագրական վճարը հաշվարկվում է ապահովագրության փաստացի ժամանակահատվածին համապատասխան, բայց ոչ պակաս, քան 15 օրվա համար:

5. Սույն դրույթի 1 և 3 կետերի համաձայն՝ գործող ապահովագրական պայմանագրի պայմանների հիման վրա ապահովագրական պայմանագրում ավելացվող օդանավերի շահագործման, օդային փոխադրումների իրականացման կամ ավիացիոն աշխատանքների կատարման ընթացքում իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրման վերաբերյալ դիմումը կամ ապահովագրական պայմանագրից բացառվող օդանավերի վերաբերյալ պայմանագրի դադարեցման մասին ծանուցումը, Ապահովագրվողը պարտավոր է գրավոր ներկայացնել Ապահովագրողին գործող պայմանագրի մեջ օդանավի ավելացման կամ բացառման պահից ոչ պակաս, քան մեկ օր առաջ:

AVN18A

(01.10.96.)

Գումարի վերադարձ օդանավի պարապուրդի դեպքում

Ապահովագրված օդանավի պարապուրդի դեպքում, թռիչքը և վարումը ծածկող սույն ապահովագրության բոլոր մասերը կասեցվում են, և ապահովագրական գումարների վերադարձը կկանոնակարգվի ապահովագրության ավարտից հետո ներքոհիշյալ պայմաններով:

1. Ապահովագրվողի ծանուցումը պետք է տրվի ապահովագրողին մինչև պարապուրդի սկսվելը և օդանավի պարապուրդի դադարեցումից առաջ:

2. Ապահովագրական պարգևը չի վերադարձվում՝

ա) պարապուրդի ընթացքում, որը կապված է թռիչքային պիտանիության վկայագրերի սերտիֆիկատների վերականգնման հետ՝ ներառյալ դրա հետ կապված այլ անհրաժեշտ աշխատանքների կատարման հետ:

բ) եթե պարապուրդի ժամկետը չի գերազանցում 30 հերթական օրեր՝ բացառելով այն պարապուրդի օրերը, որոնք ընդգրկում են ա) կետում,

գ) եթե ապահովագրված օդանավի մասով տվյալ ապահովագրությամբ ներկայացվել է հայց:

Նախորդ պայմանների հիման վրա ապահովագրական պարգևի վերադարձը կկազմի «բոլոր կասկո ռիսկերի» տարեկան ապահովագրման պարգևատրման և «վերերկրյա ռիսկերի» (հաստատված ապահովագրողի կողմից) ապահովագրման համար տարեկան պարգևատրման տարբերության 75%, հաշվարկված pro-rata սկզբունքով՝ պարապուրդի ժամանակահատվածի համար:

Օդանավի պարապուրդը 30 և ավել իրար հաջորդող օր տևելու դեպքում՝ ապահովագրման վճարի վերադարձվող մասը հաշվարկվում է՝ ելնելով պարապուրդի օրերի և տվյալ օդանավի ապահովագրման ժամկետի օրերի քանակի հարաբերակցությամբ:

AVN 26

(01.10.96)

Միջուկային ռիսկերի բացառումը ապահովագրության պայմաններից

(կիրառվում է օդանավի և օդանավերի սեփականատերերի և ավիափոխադրողների քաղաքացիական պատասխանատվության ապահովագրման դեպքում)

1. Համաձայն սույն Դրույթի ապահովագրական պատահարներ չեն համարվում ցանկացած գույքի կորուստը կամ վնասը և/կամ Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվությունը ցանկացած վնաս հասցնելու համար, որը հանդիսանում է ներքոհիշյալներից որևէ մեկի հետևանք՝

ա) ռադիոակտիվ, թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր հատկություններ ունեցող ցանկացած պայթուցավտանգ միջուկային սարքեր կամ նրա միջուկային բաղկացուցիչ մասեր,

բ) ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութերը թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր հատկություններ ունեցող ռադիոակտիվ նյութերի հետ խառնուրդներ, ցանկացած այլ ռադիոակտիվ նյութեր՝ դրանք որպես բեռ տեղափոխման դեպքում, ներառյալ նրա պահպանումը, բեռնման և բեռնաթափման աշխատանքները,

գ) իոնիզացնող ռադիացիա կամ ցանկացած այլ ռադիոակտիվ աղբյուրներից ռադիոակտիվ կամ ցանկացած այլ ռադիոակտիվ աղբյուրներից թունավոր, պայթուցիկ կամ այլ վտանգավոր հատկություններով վարակում :

2. Համաձայն սույն Դրույթի՝ 1 կետի բ) և գ) ենթակետերում նշված ռադիոակտիվ նյութերին կամ ռադիոակտիվ աղբյուրներին չեն վերաբերվում՝

ա) աղքատացրած ուրան կամ ցանկացած տեսքով բնածին ուրան,

բ) ռադիոիզոտոպներ, որոնք հասել են մշակման վերջնական փուլին և պիտանի են գիտական, բժշկական, գյուղատնտեսական, առևտրային, կրթական և արտադրական նպատակներով օգտագործման համար:

3. Ապահովագրության պայմանագրով ապահովագրական պատահարներ չեն համարվում ցանկացած գույքի կորուստը կամ վնասը և/կամ Ապահովագրվողի ցանկացած վնաս հասցնելու համար քաղաքացիական պատասխանատվությունը, եթե՝

ա) Ապահովագրվողը հանդես է գալիս նաև որպես ապահովագրված անձ կամ համաապահովագրվող այլ ապահովագրական պայմանագրերով, ներառյալ ատոմային էներգիայի օգտագործման հետևանքով հասցված վնասի համար պատասխանատվության ապահովագրության պայմանագրերը,

բ) ցանկացած ֆիզիկական անձ կամ կազմակերպություն (բացի Ապահովագրվողից) պարտավոր են ֆինանսական պաշտպանություն ապահովել այն երկրների օրենսդրության համաձայն, որտեղ իրականացվում են ապահովագրված օդանավերի շահագործումը,

գ) Ապահովագրվողը իրավունք ունի վնասների փոխհատուցում ստանալ ցանկացած կառավարության կամ դրա կազմակերպության կողմից, եթե նույնիսկ ապահովագրությունը չգործեր,

4) ցանկացած գույքի կործանումը, վնասը կամ կորուստը և/կամ Ապահովագրվողի ցանկացած վնաս հասցնելու համար քաղաքացիական պատասխանատվությունը, որոնք հետևանք են սույն Դրույթի 2-րդ ենթակետում նշված ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ աղբյուրների ներգործության, սույն Դրույթի համաձայն կարող է դիտվել որպես ապահովագրական դեպք պայմանով, որ

ա) որևէ ռադիոակտիվ նյութի որպես բեռ տեղափոխումը, ներառյալ պահպանումը կամ բեռնման, բեռնաթափման աշխատանքները կիրականացվեն համաձայն IATA-ի «Վտանգավոր բեռների օդային անվտանգ տեղափոխման տեխնիկական ցուցումների» կամ օրենսդրության ավելի խիստ պահանջներին համաձայն,

բ) վերը նշված դեպքը տեղի է ունեցել ապահովագրության գործողության ընթացքում, և ապահովագրական հատուցման վերաբերյալ հայցը կներկայացվի Ապահովագրողին ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածում:

գ) ռադիոակտիվ աղտոտման մակարդակը կգերազանցի Աղյուսակում նշված թույլատրելի մակարդակը,

Ճառագայթող МАГАТЭ-ի անվտանգության նորմեր	Մակերևույթի ռադիոակտիվ աղտոտման առավելագույն թույլատրելի մակարդակ (միջինացված 300 սմ ² -ից մեծ մակերևույթի համար)
բետա և գամմա մասնիկներ, ինչպես նաև ցածր թունավորման ալֆա մասնիկներ ճառագայթողներ	ոչ ավել քան 4 Բկ/սմ ² (0,1 նԿի/սմ ²)
մյուս բոլոր ճառագայթողներ	ոչ ավել քան 0,4 Բկ/սմ ² (0,01 նԿի/սմ ²)

դ) սույն դրույթին համապատասխան իրականացված ապահովագրությունը կարող է դադարեցվել Ապահովագրողի կողմից Ապահովագրվողին գրավոր ծանուցում ներկայացնելուց 7 օր լրանալուց հետո:

AVN 38B

(22.07.96)

Ուղևորների հանդեպ պատասխանատվություն

(համատեղ վերանայում և հատուկ պայմանագրեր)

1. Այստեղ օգտագործվող «Վարշավայի Կոնվենցիա» տերմինը նշանակվում է Միջազգային Ավիափոխադրմանը վերաբերվող Համապատասխան Պայմանների Ունիֆիկացման Կոնվենցիա, որը ստորագրվել է Վարշավայում 1929 թվականի հոկտեմբերի 12-ին, կամ այդ Կոնվենցիայի ցանկացած փոփոխություն կամ լրացում, որը ձևակերպվել է որպես արձանագրություն, լրացուցիչ, նոր կամ հավելյալ Կոնվենցիա կամ որևիցե այլ կերպ:

2. ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Եթե տվյալ ապահովագրության գործողության ընթացքում որևէ ժամանակ Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվությունը կարող է գտնվել հետևյալ իրադարձություններից ցանկացած որևէ մեկի կամ դրանց ցանկացած համակցության ներգործության տակ՝

ա) Վարչավայի Կոնվենցիայի ցանկացած ռատիֆիկացիա կամ դենոնսացիա կամ լրացում կամ միացում, կամ այն դեպքում երբ Վարչավայի Կոնվենցիայի կիրառումը դադարում է ցանկացած Պետության կամ Տարածքի նկատմամբ, որտեղ այն նախկինում գործել է,

բ) պատասխանատվության ցանկացած փոփոխություն ազգային օրենսդրությամբ կամ ցանկացած Պետական կամ այլ պաշտոնական պահանջներին համապատասխան:

Այդ դեպքում, չնայած ապահովագրության ցանկացած այլ պայմանների, և, նկատի ունենալով վերը նշված իրադարձություններից ցանկացածը, ինչպես Ապահովագրվողը, այնպես էլ Ապահովագրողը պահանջների և դրույթների վերանայման պահանջի իրավունք են ստանում: Նրանց կողմից համաձայնեցված դրույթները և պայմանները, եթե այլ բան համաձայնեցված չէ, դառնում են գործող, եթե և երբ իրադարձությունները (կամ իրադարձությունը), որոնք վերաբերվում են վերը նշված վերանայմանը, դառնում է(են) գործող:

Եթե վերանայվող դրույթների և պայմանների գծով համաձայնություն ձեռք չի բերվել վերը նշված վերանայման գրավոր հարցման ամսաթվից 60 օրվա ընթացքում, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք է ստանում Ապահովագրության դադարեցման վերաբերյալ 30 օրվա ծանուցում տալ:

3. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ

Ապահովագրողի կողմից նախօրոք համաձայնության և լրացուցիչ ապահովագրական վճար վճարելու դեպքում սույն Ապահովագրության ապահովագրական ծածկույթը կարող է տարածվել Հատուկ Պայմանագրերի գծով Ապահովագրվողի քաղաքացիական պատասխանատվության վրա: Վերը նշված “Հատուկ Պայմանագիր” տերմինը նշանակում է՝

(i) պատասխանատվության ավելի մեծ սահմանաչափի վերաբերյալ Ապահովագրվողի և Ուղևորի միջև համաձայնությունը՝ համաձայն Վարչավայի Կոնվենցիայի 22(1) հոդվածի, կամ

(ii) Ապահովագրվողի և Ուղևորի միջև ցանկացած այլ համաձայնություն, որով Ապահովագրվողը իր վրա է վերցնում ավելացված քաղաքացիական պատասխանատվություն ուղևորի մահվան կամ մարմնական վնասվածքների գծով: Հավանության արժանացած Հատուկ Պայմանագրերը, որոնք հաստատվել են վերը նշված կարգով, պետք է հաստատվեն Ապահովագրողին տրամադրած փաստաթղթերով, որոնք իրենցից ներկայացնում են Տոմսերի Օրինակներ, Պայմանագրի կամ Տեղափոխման Պայմաններ, ինչպես նաև Ուղևորների Տեղեկացում կամ, որպես տարբերակ, տեղափոխողների միջև Համաձայնագրի Պատճեն, որոնք պարտադրում են այնտեղ նշված կողմերին կնքել Հատուկ Պայմանագիր:

4. Վերը նշվածից որևէ մեկը չի կարող համարվել Ապահովագրությունում նշված Ապահովագրողի պատասխանատվության սահմանների փոփոխություն: Պայմանագրային համաձայնություններին վերաբերող Ապահովագրության ցանկացած պայմաններ փոփոխվում են միայն այն չափով, որը կարող է անհրաժեշտ լինել այն բանի համար, որ համապատասխանեն սույնով նախատեսվածին:

Աղմուկի, աղտոտման և այլ վտանգների ներգործության բացառում

(կիրառվում է ավիափոխադրողների և օդանավը շահագործողների քաղաքացիական պատասխանատվության դեպքում)

1. Սույն ապահովագրությամբ չեն փոխհատուցվում այն վնասները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն առաջացել են կամ տեղի են ունեցել կապված՝

ա) աղմուկի ներգործության (լսողության համար ընկալելի կամ ոչ), տատանման (վիբրացիա), ձայնային հարվածի կամ այլ նմանատիպ երևույթների հետ,

բ) ցանկացած տեսակի աղտոտման,

գ) էլեկտրական կամ էլեկտրամագնիսական ազդեցության,

դ) գույքի օգտագործման հնարավորության վրա ներգործություն, եթե դա չի հանդիսացել վթարի, հրդեհի, պայթյունի կամ բախման հետևանք կամ թռիչքի ընթացքում գրանցված պատահար, որը առաջացել է օդանավի չգրանցված շահագործման հետևանքով:

2. Հայցերի դեպքում իր իրավունքները պաշտպանելու կամ քննարկելու Ապահովագրողի պարտավորությանը վերաբերող Վկայագրի /պոլիսի/ ցանկացած պայմանի գծով նման պայմանը չի կիրառվի և Ապահովագրվողը պարտավոր չի լինի պատասխանել՝

ա) կետ 1-ից բացառված հայցերին,

բ) Վկայագրով ծածկվող հայցերին, երբ դրանք միանում են կետ 1-ից բացառված հայցերին (ստորև նշված որպես “միասնական հայցեր”):

3. Մի քանի հայցերից բաղկացած միասնական հայցի դեպքում (վնասի ապացույցի առկայության դեպքում՝ հանած վկայագրով սահմանված պատասխանատվության չափը) Ապահովագրողը կհատուցի Ապահովագրվողին համապատասխան մասը՝

ա) Ապահովագրվողի կողմից դատական ակտի հիման վրա վճարվելիք վնասների,

բ) Ապահովագրվողի կրած դատական ծախսերի և պահումների:

4. Վերը նշվածը չպետք է հակասի ռադիոակտիվ վարակման դրույթին կամ այլ բացառող դրույթին, որը կցված է կամ հանդիսանում է տվյալ վկայագրի մասը:

Ռազմական ռիսկերի, գողության և այլ վտանգների ռիսկերի բացառում

(կիրառվում է օդանավերի ապահովագրության և դրանց սեփականատերերի և ավիափոխադրողների քաղաքացիական պատասխանատվության դեպքում)

1. Սույն Պայմանների համաձայն՝ ապահովագրական դեպքեր չեն հանդիսանում ցանկացած գույքին հասցված վնասը կամ կորուստը և/կամ Ապահովագրվողի ցանկացած վնաս հասցնելու համար քաղաքացիական պատասխանատվությունը, որոնք առաջացել են հետևյալ պատահարների արդյունքում՝

ա) պատերազմի, ներխուժման, արտաքին թշնամիների ակտերի, ռազմական գործողությունների (հայտարարված կամ չհայտարարված պատերազմ), քաղաքացիական պատերազմի, խռովության, հեղափոխության, ապստամբության, ռազմական դրության կամ իշխանության անօրինական զավթման կամ իշխանության անօրինական զավթման փորձի,

բ) ցանկացած զինամթերքի միջոցով իրագործված պայթյունի, որի դեպքում կիրառվում է ատոմային կամ միջուկային և/կամ սինթետիկ կամ այլ նմանատիպ ռեակցիաների կամ ռադիոակտիվ ուժի կամ նյութի,

գ) գործադրողի, անկարգության, քաղաքացիական անհնազանդության գործողությունների կամ մասսայական անկարգության,

դ) մեկ մարդու կամ մարդկանց խմբի կողմից իրականացրած գործողությունների, անկախ այն հանգամանքից, որ նրանք հանդես են գալիս որպես սուվերեն պետության գործակալ թե ոչ՝ ուղղված քաղաքական կամ ահաբեկչական նպատակների հասնելու անկախ այն բանից, թե ցանկացած գույքի վնասը կամ կորուստը հանդիսացել է նշված գործողությունների պատահական կամ կանխամտածված հետևանք,

ե) ցանկացած չարամիտ գործողության կամ սաբոտաժի,

զ) սեփականության կոնֆիսկացիայի, ազգայնացման, ձերբակալման, ազատազրկման, յուրացման, ռեկվիզիցիայի կամ ցանկացած կառավարության (քաղաքացիական, ռազմական կամ փաստացի գործող) կամ պետական կամ տեղական իշխանության կողմից օգտագործման կամ նրանց հրահանգով,

է) օդանավի կամ թռիչքի ընթացքում անձնակազմի առևանգում կամ անօրինական զավթում կամ բռնի ուժի կիրառմամբ հսկում (ներառյալ նման զավթման կամ հսկման ցանկացած փորձ), որն իրագործել է օդանավի վրա գտնվող մեկ մարդու կամ մարդկանց խմբի կողմից առանց Ապահովագրողի համաձայնության:

2. Բացի այդ ապահովագրական պայմանագրով ապահովագրական դեպքեր չեն հանդիսանում ցանկացած գույքի կորուստը կամ վնասը և/կամ Ապահովագրվողի վնաս հասցնելու համար քաղաքացիական պատասխանատվությունը, որը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ օդանավը գտնվում է Ապահովագրվողի հսկողությունից դուրս՝ վերը թվարկված իրադարձություններից որևէ մեկի պատճառով:

Օդանավը կհամարվի նորից Ապահովագրվողի հսկողության տակ, երբ Ապահովագրվողը նորից կտիրապետի, կօգտագործի կամ կտնօրինի օդանավը:

Տվյալ դեպքում օդանավը պետք է ամբողջությամբ շահագործման համար պիտանի և բարեհաջող վերադարձվի Ապահովագրվողին այն օդանավակայանը, որը գտնվում է ապահովագրության պայմանագրով որոշված օդանավի շահագործման աշխարհագրական շրջանների սահմաններում:

Վերադարձը բարեհաջող է համարվում այն դեպքում, եթե օդանավը գտնվում է կայանատեղում՝ անջատած շարժիչով և առանց երրորդ անձանց պարտադրանքի:

AVN48B

(01.10.96.)

Ընդլայնված ծածկույթ (պատասխանատվություն)

1. Չնայած, որ Վկայագիրը, որի մաս է հանդիսանում սույն դրույթը (հավաստագիրը), իր մեջ ներառում է «Ռազմական ռիսկերի, կողոպուտի և այլ վտանգների բացառման» դրույթը (AVN48B), համաձայնեցված և հաստատված է, որ բոլոր ենթաբաժինները, որոնք հանդիսանում են սույն Պոլիսի մասը, բացի սույն Վկայագրի մասը հանդիսացող AVN48B դրույթի բ) բաժնից, համարվում են չգործող:

2. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ կիրառվում են միայն այն ցանկացած ծածկույթի մասով, որը ընդլայնվել է AVN48B դրույթի ա) ենթաբաժնի գործողության դադարեցումից հետո:

Ծածկույթը իր մեջ չի ներառի ցանկացած տիպի սեփականության վնաս Կանադայի և ԱՄՆ սահմաններից դուրս տեղակայված ցամաքի վրա, բացառությամբ Օդանավի շահագործման հետևանքով/պատճառով առաջացած կամ դրանով պայմանավորված վնասի:

3. Պատասխանատվության սահմանափակում

Սույն դրույթով ծածկույթի գծով Ապահովագրվողի պատասխանատվության չափը սահմանափակվում է ապահովագրական վկայագրում նշված սահմանաչափով, սակայն հիմնական Պոլիսով ապահովագրված ապահովագրական ծածկույթով ուղևորների մասով ենթասահմանաչափ չի կիրառվում: Ենթասահմանաչափ, որպես հավելում, չի կիրառվում նաև վկայագրում նախատեսված պատասխանատվության չափին:

4. Ինքնըստինքյան դադարեցում

Սույն դրույթով նախատեսված և ստորև թվարկված ապահովված ծածկույթի ավելացումը ինքնըստինքյան դադարում է հետևյալ դեպքերում՝

ա) ամբողջ ծածկույթը

- Ներքոհիշյալ երկու կամ ավելի Պետությունների միջև պատերազմի հանկարծակի սկսելը (անկախ այն հայտարարված է, թե՛ ոչ, ինչպես օրինակ Ֆրանսիա, ՉԺՀ, ՌԴ, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ,

բ) AVN48B դրույթի ա) ենթաբաժնի գործողության դադարեցումից հետո ընդլայնված ցանկացած ծածկույթի:

- Ցանկացած այնպիսի զինամթերքի պայթյունի դեպքում, որը օգտագործում է ատոմային կամ միջուկային կամ այլ ռադիոակտիվ պրոցեսներ կամ ուժ կամ նյութ, անկախ այն հանգամանքից, թե որտեղ և երբ է տեղի ունեցել պայթյունը և անկախ այն բանից, թե Ապահովագրվողը ներգրավված է եղել, թե՛ ոչ:

գ) ապահովագրական ողջ ծածկույթը Ապահովագրվողի կողմից (ա) և (բ) ենթակետերի հիման վրա հարցումի ներկայացման դեպքում՝

- նման հարցումը ներկայացնելուն պես:

Եթե Ապահովագրվողի Օդանավը գտնվում է օդում, երբ տեղի են ունենում (ա), (բ) և (գ) ենթակետերում նկարագրված իրադարձությունները, սույն ինդոսամենտով (հաստատում) ապահովվող ծածկույթը (բացառությամբ այն պահի, երբ այն արդեն հետաձգված է, դադարեցված) այդ Օդանավի գծով գործում է մինչև առաջին վայրէջքի և բոլոր ուղևորների Օդանավից ամբողջական դուրս գալու ավարտը:

5. Վերանայում և Կանցելացիա

ա) Ապահովագրական վճարի չափի և/կամ Աշխարհագրական սահմանափակումների վերանայում (7 օր)

Ապահովագրողները իրավունք ունեն ծանուցում տալ Ապահովագրական վճարի կամ Աշխարհագրական սահմանափակումների վերանայման համար: Ծանուցումը գործում է տրման օրվանից 7(յոթ) օրվա ընթացքում սկսած ծանուցման տրման 23.59-ից՝ տեղական ժամանակով:

բ) Սահմանափակումների կանցելացիա (48 ժամ)

Սույն պայմանների 3-րդ կետի (բ) ենթաբաժնում նախատեսված պայթյունի դեպքում, Ապահովագրողները իրավունք ունեն ծանուցում տալ սույն ինդոսամենտի (հաստատման) 1-ին կետի հիման վրա տրամադրված ծածկույթի մեկ կամ մի քանի մասերի գործողության դադարեցման վերաբերյալ՝ հիմնվելով AVN48B դրույթի (գ), (դ), (ե), (զ), (է), (ը) ենթաբաժինների վրա - նման ծանուցումը ուժի մեջ է մտնում ներկայացման պահից 48 (քառասուն ութ) ժամ լրանալուն պես՝ տեղական ժամանակով 23.59-ին:

զ) Դադարում (7 օր)

Սույն ինդոսամենտով (հաստատումով) ապահովված ծածկույթը կարող է դադարեցվել ապահովագրողի կամ Ապահովագրվողի ցանկությամբ ծանուցում ներկայացնելու միջոցով, որն ուժի մեջ է մտնում ներկայացման պահից 48 (քառասուն ութ) ժամ լրանալուն պես տեղական ժամանակով 23.59:

դ) Ծանուցումներ

Բոլոր ծանուցումները պետք է ներկայացվեն գրավոր:

AVN.52E

(19.09.2001)

Ոչ ավիացիոն պատասխանատվություն

Սույն Վկայագիրը չի ծածկում Ապահովագրվողի պատասխանատվությունը, բացառությամբ ստորև թվարկված մեկ կամ մի քանի դեպքերի՝

1. օդանավի, դրա մասերի կամ օդանավի սարքավորումների հետ կապված պատահարներ,

2. օդանավակայանի տարածքում տեղի ունեցած պատահարներ,

3. ուղևորների կամ բեռի տեղափոխման հետ կապված Ապահովագրվողի գործունեության ընթացքում տեղի ունեցած պատահարներ, որոնք տեղի են ունեցել ցանկացած այլ վայրում,

4. Ապահովագրվողի կողմից երրորդ անձանց ապրանքների և ծառայությունների տրամադրման հետ կապված պատահարներ՝

4.1. կապված օդանավի օգտագործման և/կամ շահագործման հետ,

4.2. ավիացիոն արդյունաբերության գծով ընդգրկված պատահարներ:

AVN59

(01.10.96)

Ավիացիոն ֆինանսական պայմանագրերի և վարձակալության պայմանագրերի վերաբերյալ ինդոսամենտ

Պայմանագրի (Պայմանագրերի) առարկա հանդիսացող սարքավորումները ներառվում են Պայմանագրի Կողմի (Կողմերի) շահերի ոլորտում: Այդ կապակցությամբ, ապահովագրությունը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դրա ավարտը կամ համաձայնեցված դադարեցումը կամ մինչև Ապահովագրվողի կամ Պայմանագրի Կողմերի (Կողմի) որևէ գործողության հետևանքով պայմանագրային պարտավորությունների կատարման դադարեցումը, կախված այն բանից, թե վերը թվարկվածներից որը ավելի շուտ տեղի կունենա՝ հաշվի առնելով Պայմանագրի Կողմի (կողմերի) նշված շահերը և լրացուցիչ Ապահովագրավճարի վճարումը, հաստատվում է, որ սույն Վկայագրով տրամադրված Ապահովագրական ծածկույթը գործում է և ունի լիիրավ իրավաբանական ուժ: Բացի այդ, հաստատվում է, որ սույն Վկայագրին կցվում են հետևյալ հատուկ Պայմանները:

1. Օդանավի Կմախքի և Պահեստամասերի Ապահովագրության գծով

1.1. Սարքավորման ամբողջական կործանման հետևանքով ծագած հատուցման ենթակա հայցերի դեպքում, հատուցման վճարումը (գումար, որից հանված են Պոլիսով նախատեսված համապատասխան ֆրանշիզաները) կատարվում է Պայմանագրի Կողմին (Կողմերին) կամ իրենց կողմից նշած ցանկացած այլ անձի: Ցանկացած այլ հայցերի դեպքում փոխհատուցման վճարումը (գումար, որից հանված են Պոլիսով նախատեսված համապատասխան ֆրանշիզաները) իրականացվում է այն երրորդ կողմին, որի մասնակցությունը պարտադիր է սարքավորումների վերանորոգման համար, եթե Ապահովագրողի և Ապահովագրվողի, ինչպես նաև Պայմանագրի Կողմի (Կողմերի) միջև այլ բան համաձայնեցված չէ, և եթե դա նախատեսված է Պայմանագր(եր)ի պայմաններով:

Փոխհատուցման նման վճարումներն իրականացվում են միայն կիրառվող օրենսդրությանը համապատասխանելու դեպքում:

1.2. Գույքային հայցերով փոխհատուցում վճարելիս Ապահովագրողներն իրավունք ունեն փոխհատուցման գումարից հանել փրկված գույքի արժեքը:

2. Քաղաքացիական Պատասխանատվության Ապահովագրության մասով

2.1. Սույն Ինդոսամենտի պայմանների համաձայն, Ապահովագրությունը գործում է բոլոր դեպքերում այնպես, ինչպես կգործեր, եթե տրվեին առանձին վկայագրեր տվյալ Վկայագրի յուրաքանչյուր ապահովագրված անձանց, սակայն սույն պայմանը չի կիրառվում այն սարքավորմանը հասցված վնասի հատուցման հայցի դեպքում, որն ապահովագրված է համաձայն կմախքի և պահեստամասերի ապահովագրության: Չնայած վերը նշվածին, Ապահովագրողի գումարային պատասխանատվությունը բոլոր Ապահովագրվողների կամ նրանցից յուրաքանչյուրի հանդեպ չի կարող գերազանցել Վկայագրում նշված պատասխանատվության չափը:

2.2 Սույն Ապահովագրությունը հանդիսանում է հիմնական և իր մեջ չի ներառում հատուցման ստացման իրավունք Պայմանագրի Կողմին (Կողմերին) վերաբերող ցանկացած այլ ապահովագրությամբ:

2.3. Սույն փաստաթուղթը չի տրամադրում ապահովագրական ծածկույթ պայմանագրի Կողմի (Կողմերի)՝ որպես Սարքավորման պատրաստում, վերանորոգում կամ սպասարկում իրականացնողի, քաղաքացիական պատասխանատվության մասով՝ համապատասխան հայց հարուցվելու դեպքում:

3. Բոլոր Ապահովագրությունների գծով

3.1. Պայմանագրի Կողմը (Կողմերը) ընդգրկվում են որպես Լրացուցիչ Ապահովագրվողներ:

3.2. Սույն փաստաթղթի համաձայն Պայմանագրի յուրաքանչյուր Մասնակցին տրամադրվող ծածկույթը չեղյալ չի համարվում երրորդ անձի կամ կողմի որևէ գործողության կամ անփութության հետևանքով (ներառյալ ինֆորմացիայի խեղաթյուրումը և չտրամադրումը), որն առաջացրել է Վկայագրով նախատեսված որևէ ժամկետի, պայմանի կամ երաշխիքային պարտավորության խախտում, ՊԱՅՄԱՆՈՎ, որ նման ձևով ապահովագրված Պայմանագրի Կողմը չի հանդիսացել տվյալ գործողության կամ անփութության պատճառ, չի նպաստել դրա իրականացմանը և չի թույլ տվել այն գիտակցաբար:

3.3. Սույն փաստաթղթի պայմանները կիրառվում են միայն նշված Պայմանագր(եր)ով որպես ֆինանսիստ/վարձատու Պայմանագր(եր)ի Կողմի(Կողմերի) գործունեության նկատմամբ և չի կիրառվում նրանց այլ գործունեության նկատմամբ: Այն հանգամանքը, որ Պայմանագրի որևէ Կողմ կարող է նաև զբաղվել այլ տեսակի գործունեությամբ (որևէ

պայմանագրին կամ համաձայնագրին համապատասխան), չի կարող դիտվել որպես սույն ինդոսամենտով տրամադրվող ապահովագրական ծածկույթը չեղյալ համարելու պատճառ:

3.4. Պայմանագրի Կողմը (Կողմերը) ապահովագրավճարի վճարման համար պատասխանատվություն չի կրում, և Ապահովագրողը հրաժարվում է Պայմանագրի Կողմին (Կողմերին) հակընդդեմ հայց ներկայացնելու կամ հաշվանց կատարելու իրավունքից, բացառությամբ Սարքավորման համար ապահովագրավճարի վճարման պահանջից:

3.5. Պայմանագրի Կողմի (Կողմերի) կամ նրա կողմից նշված այլ անձի օգտին վնասի կամ հայցով հատուցումը վճարելուց հետո, Ապահովագրողը պետք է համապատասխան չափով սուբրոգացիայի իրավունք ստանա հատուցում ստացած Պայմանագրի Կողմի (Կողմերի) բոլոր օրինական իրավունքների մասով (բայց ոչ Պայմանագրի Կողմին դեմ): Ապահովագրողը պարտավորվում է չօգտագործել այդ իրավունքները առանց հատուցումը ստացած անձանց համաձայնության, իսկ այդ համաձայնեցումը կարող է մերժված լինել միայն հարգելի պատճառներով: Պայմանագրի նման Կողմը (Կողմերը) պետք է Ապահովագրողի հաշվին կատարի հնարավորինը, որպեսզի օգնի Ապահովագրողին օգտվել նշված իրավունքներից:

3.6. Բացառությամբ Պայմանագրում կամ դրա ցանկացած համաձայնեցված հավելվածներում Վկայագրի անվավերության և ինքնըստինքյան դադարեցման մասին պայմանների, սույն Ինդոսամենտին համապատասխան տրվող Ապահովագրական ծածկույթը կարող է անվավեր ճանաչվել կամ Պայմանագրի Կողմի (Կողմերի) շահերի վրա բացասական ազդեցություն թողնող նյութական փոփոխություններ կրել միայն այդ մասին Նշանակված Միջնորդին՝ առնվազն 30 օր առաջ գրավոր ծանուցում ուղարկելու դեպքում: Ծանուցումն ուժի մեջ է մտնում ուղարկման պահից: Սակայն նման Ծանուցագիրը Չի ուղարկվում Վկայագրի կամ դրա այլ համաձայնեցված հավելվածի գործողության ժամկետի ավարտին:

ԲԱՅԱՌՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՈՒԿ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՄ ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ(ՆԵՐԸ) ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳՐՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԵՆ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՆՐԱՆՈՒՄ ՆՇՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ, ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ, ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՎԱՎԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ:
2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԵՆԹԱԿԱ ՉԷ ՓՈՓՈԽՄԱՆ, ՊՈԼԻՍՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐ(ԵՐ)Ի ՈՐԵՎԷ ԴՐՈՒՅԹԻ ԿՈՂՄԻՑ:

ՏՎՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Սարքավորումներ (նշել ապահովագրման ենթակա օդանավի, շարժիչների կամ պահեստամասերի հատկանիշները),
2. Սարքավորմանը հասցված ֆիզիկական վնասի համար Վկայագրով կիրառվող ֆրանշիզաներ (նշել Վկայագրով կիրառվող բոլոր ֆրանշիզաները),
3. (ա) պայմանագրի Կողմ (Կողմերը), և
(բ) բացի այդ քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասով,
4. պայմանագիր (գրեր),
5. ուժի մեջ մտնելու ամսաթիվը (Վկայագրում Սարքավորումները ներառելու կամ այլ հատուկ որոշված ամսաթիվ),
6. լրացուցիչ Ապահովագրավճար,

7. նշանակված միջնորդ:

AVN67B

**1999 թ. Համաձայնագրերի (Երրորդ անձանց իրավունքների) մասին օրենքի
բացառում**

Տվյալ Ապահովագրության կամ վերաապահովագրության մասնակից չհանդիսացող անձանց իրավունքները բացառված են տվյալ ապահովագրությունից կամ վերաապահովագրությունից Մեծ Բրիտանիայի 1999թ. Համաձայնագրերի (Երրորդ անձանց իրավունքների) մասին օրենքի հիման վրա, տվյալ ապահովագրությանը կամ վերաապահովագրությանը ուժ տալու և/կամ տվյալ ապահովագրության կամ վերաապահովագրության դադարեցման կանխման, վարիացիայի կամ առանց նրա համաձայնության փոփոխման համար:

AVN 72

(09.02.2000)

Օդաչուների ապահովագրություն

Վկայագրի հատվածները, որոնք ծածկում են ֆիզիկական վնաս պատճառելու պատասխանատվությունը, ներառյալ ուղևորների նկատմամբ և գույքային վնաս հասցնելու պատասխանատվությունը, ընդլայնված են Ապահովագրվողի կողմից ճանաչված ցանկացած օդաչուների ապահովագրության համար այնպես, ինչպես եթե նրանք լինեին ապահովագրվողներ վկայագրի պայմաններին համաձայն, վկայագրում նշված օդանավի շահագործման ընթացքում վնասների և վնասվածքների մասով, սակայն այնպես, որ ապահովագրողի պատասխանատվությունը չգերազանցի վկայագրով սահմանված պատասխանատվության ընդհանուր չափը:

Միշտ հասկացվում է, որ

1) ցանկացած պատահարի ժամանակ, որը կարող է հանգեցնել սույն դրույթին համաձայն հայցի հարուցման, նշված օդաչուն

ա) պետք է հետևի և ենթարկվի վկայագրում պարունակվող պայմաններին, որոշումներին և բացառություններին, եթե նույնիսկ նա հանդիսանում է ապահովագրվող և

բ) իրավունք չունի ապահովագրվել ցանկացած այլ վկայագրով:

2) Ապահովագրվողի կողմից օդաչուի դեմ հայց հարուցվելու դեպքում և/կամ նման հայցը վկայագրում նշված օդանավին վերաբերվելու դեպքում սույն դրույթը վկայագրով հատուցում ստանալու իրավունք չի տալիս:

AVN74

(09.02.01)

Լրացուցիչ վճարումներ

Սույնով հասկացվում և համաձայնեցված է, որ տվյալ վկայագրի պայմանները ընդլայնված են համաձայն ստորև նշված ենթաբաժինների հնարավորին չափ ամբողջական ծածկույթի համար: Հատուկ հասկացվում է, որ ոչ մի ծածկույթ չի ապահովվում տվյալ դրույթի ենթաբաժիններին համապատասխան, որը նշված չէ ստորև:

Ապահովագրողները համաձայնվում են պաշտպանել ապահովագրվողներին՝

ա) Վկայագրով ապահովագրված և անհայտ կորած համարվող օդանավի փրկարարական աշխատանքների ուղղությամբ կատարված ցանկացած ընդունելի ծախսերից, պայմանով, որ այդ աշխատանքներն իրականացվել են այդ օդանավի հետ կապի վերջին սեանսից հետո պայմանավորված առավելագույն ժամկետի ավարտից հետո,

բ) ցանկացած ընդունելի ծախսերից, որոնք կատարվել են վնասված օդանավի մասով հնարավոր ծախսերը կանխելու կամ նվազեցնելու նպատակով տեղափոխման համար կամ վկայագրի համաձայն ապահովագրված օդանավի անսարքության կամ ենթադրվող անսարքության հետևանքով առաջացած վնասվածքից,

գ) ցանկացած ընդունելի ծախսերից, որոնք կատարվել են վկայագրով ապահովագրված օդանավի փաստացի վերականգնման կամ վերականգնման փորձի, տեղափոխման, մնացորդների ուտիլիզացման կամ դեկավարման հնարավորության ուղղությամբ կամ

դ) ցանկացած ընդունելի ծախսեր, որոնք Ապահովագրվողը պարտավոր կլինի կատարել քաղաքացիական ավիացիայի կամ վկայագրով ապահովագրված օդանավի կողմից հարուցված պատահարի հետ կապ ունեցող այլ իշխանությունների կողմից քննություն անցկացնելու մասով:

Ապահովագրությունը իրականացվում է վերը նշված (ա)-(դ) ենթաբաժիններին համապատասխան, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Միշտ պայմանավորված է, որ ապահովագրողի պատասխանատվությունը չի կարող գերազանցել 1.000.000,00 ԱՄՆ դոլարը ամբողջ ապահովագրության համար բոլոր ապահովագրված ենթաբաժիններով, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

AVN76

(09.02.01)

Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառում

Սույն Ապահովագրական Վկայագիրը չի ծածկում հայցերը, վնասվածքները, կյանքին և առողջությանը հասցված վնասը, կորուստները, պարապուրդները, ծախսերը կամ ցանկացած տեսակի պատասխանատվությունը (պայմանագրային, դելիկտային, անփութության հետևանքով հասցրած վնասի համար պատասխանատվությունը, արտադրողի պատասխանատվությունը, մոլորության մեջ զգելու պատասխանատվությունը, ցանկացած տեսակի խարդախությունը), անկախ նրանից, թե դրանք պատճառված են կամ հանդիսանում են հետևանք (ուղղակի կամ անուղղակի, լրիվ կամ մասնակի)՝

(ա) ՀՎՄ սարքավորումների, ծրագրային ապահովման, ինտեգրալային սխեմաների, միկրոսխեմաների կամ տեղեկատվատեխնոլոգիական սարքավորումների (անկախ նրանից

թե դրանք գտնում են Ապահովագրվողի կամ երրորդ անձանց տրամադրության տակ) անսարքության կամ սխալ աշխատանքի, ինչը առաջացել է այնպիսի տեղեկատվության մշակման, փոխանակման կամ փոխանցման արդյունքում, որը պարունակում է տվյալներ տարվա, ամսաթվի, ժամի վերաբերյալ կամ այլ տեղեկատվություն կապված

- 1999 թ.-ից 2000թ. անցման և/կամ

- 21.08.99 ամսաթվից 22.08.99 ամսաթիվ անցման և/կամ

- տարվա, ամսաթվի կամ ժամի ցանկացած այլ անցման հետ,

անկախ նրանից, թե պատահարը տեղի է ունեցել այդպիսի ամսաթվի և/կամ ժամանակի անցումից առաջ, թե՛ հետո,

բ) համակարգչի սարքավորումների կամ ծրագրային ապահովման, ինտեգրալային սխեմաների, միկրոսխեմաների կամ տեղեկատվատեխնոլոգիական սարքավորումների կամ համակարգերի (անկախ նրանից, թե նման սարքավորումը գտնվում է Ապահովագրվողի կամ երրորդ անձանց սեփականության տակ) ցանկացած փոփոխության կամ փոփոխության փորձի կամ մոդիֆիկացման հետ, որը կատարվում է տարվա, ամսաթվի կամ ժամի նշանակության փոփոխում սպասելիս, կամ ի հետևանք նման փոփոխությանը կամ ցանկացած խորհրդատվության կամ սպասարկման ծառայության հետ, որը կապված է նման փոփոխության կամ մոդիֆիկացիայի հետ,

գ) գույքը կամ սարքավորումը չօգտագործելը կամ օգտագործման հնարավորության բացակայությունը Ապահովագրվողի կամ երրորդ անձանց տարվա, ամսաթվի կամ ժամի նշանակության փոփոխման հետ կապված գործողության, անգործության կամ որոշման հետևանքով.

ինչպես սույն Վկայագրի ցանկացած պայման (դրույթ), որը վերաբերվում է Ապահովագրողի պարտավորություններին, կապված վնասների հետազոտման կամ կարգավորման հետ, չի տարածվում սույն դրույթից բացառված վնասների վրա:

AVN2000A

(22.04.98)

Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառման մասին դրույթի գործողության սահմանափակում

(կիրառվում է Օդանավի կմախքի և պատասխանատվության ապահովագրության մասով)

Քանի որ Վկայագիրը, որի անբաժանելի մասն է հանդիսանում սույն լրացումը, ներառում է AVN 2000A դրույթը «Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառման վերաբերյալ», պայմանավորված և համաձայնեցված է, որ սույն Հավելվածի բոլոր պայմաններին և դրույթներին համապատասխան, AVN2000 դրույթը չպետք է կիրառվի՝

(1) Վկայագրում նշված օդանավի (ապահովագրված օդանավի) ցանկացած պատահական վնասման կամ կորստի մասով,

(2) ցանկացած այն գումարների մասով, որը Ապահովագրվողը օրենքով պարտավոր կլինի վճարել և (եթե այդպես պահանջվում է Վկայագրով) կվճարի (ներառելով դատական ծախսերը, որոնք Ապահովագրվողը օրենքով պարտավոր կլինի վճարել), հետևյալ վնասների մասով՝

(ա) ապահովագրված Օդանավի հետ կապված պատահարի հետևանքով ուղևորներին հասցված մահացու և ոչ մահացու մարմնական վնասվածքներ և/կամ

(բ) ապահովագրված Օդանավի հետ կապված պատահարի հետևանքով ուղևորների անձնական գույքի և ուղեբեռի, փոստի և բեռի կորուստ կամ վնաս, և/կամ

գ) ապահովագրված Օդանավի հետ կապված պատահարի հետևանքով կամ այդ օդանավից ընկած առարկայով կամ մարմնով պատճառված մահացու և ոչ մահացու մարմնական վնասվածքներ, ինչպես նաև գույքին հասցված վնաս:

ԱՅՆ ՊԱՅՄԱՆՈՎ, ՈՐ

1. Սույն Հավելվածին համապատասխան տրամադրվող ծածկույթը պետք է համապատասխանի Վկայագրի բոլոր պայմաններին, դրույթներին, սահմանափակումներին, երաշխիքներին, բացառություններին և դադարեցումներին (բացառությամբ այստեղ հատուկ նշվածների), և սույն Հավելվածով ոչինչ չի ընդլայնում Վկայագրով տրամադրվող ծածկույթը:

2. Սույն Հավելվածում ոչինչ չպետք է ծածկույթ ապահովի.

ա) Ցանկացած օդանավի թռիչքի արգելման գծով և/կամ

բ) Ցանկացած գույքի օգտագործման հնարավորության կորստի գծով, եթե դա չի բխում պատահարի արդյունքում ֆիզիկական վնասից կամ սեփականության կորստից, որը հանգեցնում է Վկայագրի ներգործության տակ ընկնող պահանջի:

3. Ապահովագրվողը գիտակցում է, որ Ապահովագրողները Ապահովագրվողի կողմից տրամադրվող դիմում-տեղեկանքի և/կամ այլ փաստաթղթերի տեղեկատվությունը դիտարկում են որպես այդ Լրացումը տրամադրելու համար որոշման կայացման հիմք: Ապահովագրվողը հետագայում համաձայնում է, որ ինքը Վկայագրի գործողության ողջ ժամկետի ընթացքում պարտավորություն է կրում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել «Ապահովագրվողի Գործարքների, սարքավորումների և արտադրանքի ժամկետների ճանաչման համապատասխանությանը» վերաբերվող ցանկացած այլ կարևոր փաստեր:

AVN 2001A

(20.10.98)

Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառման մասին դրույթի գործողության սահմանափակում

(կիրառվում է միայն օդանավի հետ կապ չունեցող պատասխանատվության մասով)

Հաշվի առնելով, որ Վկայագիրը, որի անբաժանելի մասն է հանդիսանում սույն Դրույթը, իր մեջ ներառում է նաև «Ամսաթվերի ճանաչման սխալի հետ կապված ռիսկերի բացառման»- AVN 2000A դրույթը, սույնով համաձայնեցված և հաստատված է, որ սույն դրույթի բոլոր պայմանների և կետերի կատարման դեպքում AVN 2000A դրույթը չպետք է կիրառել ցանկացած այն գումարների նկատմամբ, որոնք Ապահովագրվողը օրենքի ուժով պարտավոր է վճարել և (եթե այդպես պահանջվում է Վկայագրով) կվճարի (ներառյալ Ապահովագրվողից պահանջվող գումարները) կապված հետևյալ դեպքերի հետ՝

1. մարմնական վնասվածքներ (որոնք առաջացրել են մահ կամ այլ հետևանքներ) կամ գույքի կորուստ կամ վնաս Վկայագրի գործողության ընթացքում Օդանավի պատահարի հետևանքով, որը բխում է տվյալ Վկայագրով ապահովագրված ռիսկից, և/կամ

2. մարմնական վնասվածքներ (որոնք առաջացրել են մահ կամ այլ հետևանք) կամ գույքի կորուստ կամ վնաս Վկայագրի գործողության ընթացքում Օդանավի պատահարից տարբեր այլ պատահարի հետևանքով, որը բխում է տվյալ Վկայագրով ապահովագրված ռիսկից: Ցանկացած կասկածներից և ցանկացած այլ կոնտեքստով բառերի կողմնակալ մեկնաբանումից խուսափելու նպատակով, միայն սույն ենթաբաժնի նպատակներով, «մարմնական վնասվածքների» տակ հասկացվում են միայն ֆիզիկական մարմնական վնասվածքները: Այստեղ չեն ներառվում հոգեկան և հոգեբանական վնասները, եթե դրանք ուղղակիորեն չեն առաջացել այստեղ նշված պատճառներով:

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է, ՈՐ

1. Սույն Հավելվածին համապատասխան տրամադրվող ծածկույթը տրամադրվում է, եթե պահպանված են Վկայագրի բոլոր պայմանները, դրույթները, սահմանափակումները, երաշխիքները, բացառությունները և դադարեցումները (բացառությամբ այստեղ հատուկ նշվածների), և սույն Դրույթով ոչինչ չի ընդլայնում Վկայագրով տրամադրվող ծածկույթը:

2. Սույն Դրույթում ոչինչ չի ապահովում որևէ ծածկույթ

(ա) Վկայագրում չնշված ռիսկերի և/կամ ցանկացած ոչ ավիացիոն ռիսկերի մասով, և/կամ

(բ) ցամաքային ռիսկերի մասով, և/կամ

(գ) ցանկացած գույքի չօգտագործման հետևանքով առաջացած վնասների մասով, եթե միայն դա չի հանդիսանում ֆիզիկական վնասի կամ պատահարի հետևանքով այդ գույքի շարքից դուրս գալու հետևանք, որը հանդիսացել է Վկայագրով հայց հարուցելու պատճառ:

3. Ապահովագրվողը համաձայն է, որ նա Վկայագրի գործողության ընթացքում պարտավորություն ունի Ապահովագրողին գրավոր ձևով ներկայացնել ցանկացած էական տեղեկություն, որը կապ ունի Ապահովագրվողի կողմից իրականացվող գործողությունների, արտադրվող սարքավորումների և արտադրանքի ամսաթվերի ճանաչման պահանջների համապատասխանության հետ:

AVN 2002A

21.03.01

Ենթավարձակալության տրվող սարքավորումների ապահովագրության պայմաններ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ

Գործում է, երբ Ապահովագրվողը ամսաթվով թվագրված (նշել) լիզինգի պայմանագրով մտել է հարաբերությունների մեջ՝ Ապահովագրված Սարքավորումը լիզինգառուին մատակարարելու նպատակով:

Վկայագրի գործողության ընթացքում ապահովագրված ռիսկի հետևանքով տեղի ունեցած պատահարի արդյունքում Ապահովագրված Սարքավորման կորստի դեպքում սույն Վկայագրով Ապահովագրվողին վճարվում է Համաձայնեցված Գումար, պայմանով, որ

պահպանվել են ստորև թվարկված Սահմանումները, Բացառությունները, Պայմանները և Երաշխիքը:

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Ապահովագրված ռիսկ

Օտարերկրյա Պետության կողմից ձեռնարկված գործողությունը կամ մերժումը կամ Օտարերկրյա Պետության անկարողությունը, այն է՝

ա) օտարերկրյա Կառավարության կողմից Ապահովագրված Սարքավորման բռնագրավում, զավթում, սեփականացում, օտարում, սահմանափակում, ձերբակալում կամ շահագործման կամ սեփականության իրավունքի ռեկվիզիցիա,

կամ

բ) օտարերկրյա Կառավարության մերժումը կամ անկարողությունը թույլատրել Ապահովագրվողին օգտվելու Ապահովագրված Սարքավորումը լիզինգի Պայմանագրի պայմաններին համապատասխան ենթավարձակալության տալու իր իրավունքներից, կամ

գ) օտարերկրյա Կառավարության մերժումը կամ անկարողությունը թույլատրել Ապահովագրվողին տեղափոխել Ապահովագրված Սարքավորումը Օտարերկրյա Պետությունից Ապահովագրված Սարքավորումը ենթավարձակալության տալու իր իրավունքներին համապատասխան և լիզինգի Պայմանագրի պայմաններին համապատասխան (կամ Ապահովագրված Սարքավորման գրավադրման պայմաններին համապատասխան), կամ

դ) օտարերկրյա Կառավարության մերժումը կամ անընդունակությունը թույլատրել Ապահովագրվողին հանել Ապահովագրված Սարքավորումը Օտարերկրյա Պետության ավիացիոն ռեսուրսից Ապահովագրված Սարքավորումը ենթավարձակալության տալու Ապահովագրվողի իրավունքներին և լիզինգի Պայմանագրի պայմաններին համապատասխան, կամ

ե) օտարերկրյա Կառավարության մերժումը կամ անկարողությունը Օտարերկրյա Պետությունում ստիպողական վաճառքի, ստիպողական փոխանցման կամ սարքավորման նկատմամբ իրավունքներից զրկման պայմաններին համապատասխան թույլ տալ Ապահովագրվողին վաճառքից, տեղափոխումից կամ իրավունքների զրկումից ստանալ եկամուտ ԱՄՆ դոլարով կամ արտարժույթով, որը ազատորեն փոխարկվում է ԱՄՆ դոլարի միջազգային փոխանակման շուկաներում, վերը նշված (ա), (բ) և (գ) բաժիններում նշված ռիսկերին համապատասխան, այն պայմանով, որ Ապահովագրվողները պատասխանատու չեն Ապահովագրված Սարքավորմանը հասցված ցանկացած վնասի կամ կորստի համար, եթե Օտարերկրյա Կառավարության գործողությունները էֆֆեկտիվ չէին այն ժամանակահատվածի ընթացքում, որն ավելի կարճ չէ, քան Յուգակում նշված Սպասման Ժամանակահատվածը:

2. Ապահովագրված Սարքավորումներ

Յուգակում նշված Օդանավը:

Սույն Պոլիսով նաև ծածկվում են Յուգակում նշված Շարժիչների վնասները բոլոր Ապահովագրված Ռիսկերի մասով (չնայած նրան, որ թափքին նման վնաս չի հասցվում):

Սույն Պոլիսով նաև ծածկվում են օդանավի կամ շարժիչների տեխնիկական փաստաթղթերի կորուստը ցանկացած Ապահովագրված Ռիսկերի մասով (չնայած նրան, որ թափքին և շարժիչներին նման վնաս չի հասցվում): Նման կորուստի առաջացման դեպքում Ապահովագրողները Ապահովագրվողին կվճարեն Ապահովագրվողի կողմից այդ տեխնիկական փաստաթղթերի վերականգնման, տեխնիկական սպասարկման

իրականացման, տեխնիկական սպասարկման տարբեր ձևերի կամ վերանորոգման ծախսերին հավասար գումար: Վճարումը կատարվում է կետ 1-ի (ա), (բ) և (գ) ենթակետերում թվարկված վնասների մասով, կցված ցուցակում նշված առանձին սահմանաչափերին համապատասխան:

3. Օտարերկրյա պետություն

(նշել)

4. Լիզինգառու

Իրավաբանական անձ, որին լիզինգով փոխանցվել է Ապահովագրված Սարքավորումը օտարերկրյա պետությունում:

5. Օտարերկրյա կառավարություն

Օտարերկրյա պետության կամ որևէ կոնկրետ շրջանի գործող կամ վերընտրվող կառավարություն կամ կառավարական մարմիններ (քաղաքացիական, ռազմական կամ իշխանության մոտ գտնվող) այն պայմանով, որ նման կառավարող իշխանությունները իրականացնում են արդյունավետ կատարողական վերահսկողություն՝ հաշվի չառնելով վերահսկողությանը հասնելու միջոցը:

6. Ապահովագրական գումար

Ցուցակում նշված Օդանավի արժեքը:

Ապահովագրողի առավելագույն ընդհանուր պատասխանատվությունը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի Ցուցակում նշված Օդանավերի ապահովագրական գումարը:

7. Լիզինգի պայմանագիր

Ցուցակում և օժանդակ փաստաթղթերում նշված Պայմանագիրը, որով Ապահովագրվողը Ապահովագրված Սարքավորումը վարձակալության է տալիս Լիզինգառուին Ապահովագրողների կողմից տվյալ դրույթով ներկայացվող պայմաններով, և որով Ապահովագրվողը պահպանում է Ապահովագրված Սարքավորման նկատմամբ սեփականության իրավունքը:

8. Սպասման Ժամանակահատված

Ցուցակում նշված Ժամանակահատված, մինչև որի ավարտը Ապահովագրողները պատասխանատվություն չեն կրում Ապահովագրված Սարքավորման կորստի կամ վնասման դեպքում, այն պայմանով, որ եթե Ապահովագրվողը կհամոզի Ապահովագրողներին նրանում, որ մոտ ապագայում Օտարերկրյա Պետության կողմից չի ձեռնարկվի ոչ մի գործողություն, որոնք կհանգեցնեն հեղաշրջման կամ կառավարության տապալման Սպասման Ժամանակահատվածի ընթացքում, Ապահովագրողները Ապահովագրվողին կվճարեն Ապահովագրական Գումարը այն պատճառով, որ վերջինս համապատասխանում է Ապահովագրողների բոլոր պահանջներին, չնայած այն փաստին, որ Սպասման Ժամանակահատվածը դեռ չի ավարտվել:

Սպասման Ժամանակահատվածը սկսվում է Ապահովագրողներին այն դեպքի մասին տեղեկացնելու ամսաթվից, որով հավանաբար վնասների հատուցման հայց կհարուցվի սույն վկայագրով:

ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ապահովագրվողի կողմից ֆինանսական պարտավորությունների չկատարում

Բացառվում են ցանկացած կորուստներ, որոնք առաջացել են Ապահովագրվողի (կամ Ապահովագրվողի ցանկացած գործակալի, ենթակապալառուի կամ կապալառուի) կողմից

լիզինգի պայմանագրով պարտավորությունները կատարելիս ֆինանսական պարտականությունների չկատարումով:

2. Սպասման Ժամանակահատվածի ընթացքում կորուստ կամ վնասվածք

Բացառվում է Ապահովագրված Սարքավորման կորուստը կամ վնասվածքը, որն առաջացել է Սպասման Ժամանակահատվածում՝ անկախ պատճառներից:

3. Ռազմական գործողություններ

Բացառվում է կործանման հետևանքով առաջացած ցանկացած վնաս, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջացել է ռազմական գործողությունների, օտարերկրյա թշնամիների գործողությունների, թշնամական ակտերի (անկախ նրանից պատերազմը հայտարարվել է, թե՛ ոչ), քաղաքացիական պատերազմի, հեղաշրջման, հեղափոխության, հուզումների կամ ռազմական ուժ գործադրելու հետևանքով:

4. Օրինախախտում

Բացառվում է ցանկացած վնաս, որն առաջացել է Ապահովագրվողի անկարողությամբ ենթարկվելու Օտարերկրյա Պետության գործող օրենքներին տվյալ վկայագրի գործողության սկզբից (դա չի վերաբերվում Օտարերկրյա Պետության բռնագրավում, ձերբակալության իրականացում, սեփականացում, օտարում, ազգայնացում գույքի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակում թույլատրող օրենքներին) կամ Ապահովագրվողի երկրի օրենքներին:

5. Անհրաժեշտ թույլտվություններ

Բացառվում են ցանկացած կորուստներ, որոնք առաջացել են Ապահովագրվողի անկարողությամբ ստանալ բոլոր թույլտվությունները և սանկցիաները, որոնք անհրաժեշտ են սույն վկայագրի գործողության սկզբից և/կամ անկարողությունը ուժի մեջ պահելու նման թույլտվությունները և սանկցիաները ընթացիկ ժամանակահատվածում և/կամ անկարողությունը ստանալ նման նոր թույլտվություններ և սանկցիաներ, ինչպես կարող է սահմանված լինել Օտարերկրյա Կառավարության կողմից տվյալ վկայագրի գործողության ընթացքում:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Իրավունքների փոխանցման անհնարինություն

Ապահովագրվողը չի կարող առանց Ապահովագրողի նախնական համաձայնության այլ անձի փոխանցել սույն վկայագիրը, սույն վկայագրով եկամուտը կամ պարտավորությունները: Դրա հետ մեկտեղ Ապահովագրվողը կարող է Ապահովագրողի հետ նախապես համաձայնության դեպքում պահանջել վնասների վճարումը նշված ստացողի անունով, Ապահովագրվողի տվյալ վկայագրով բոլոր պարտավորությունները մնում են անփոփոխ:

2. Անհրաժեշտ հոգատարություն

Ապահովագրողը պարտավոր է անհրաժեշտ հոգատարությամբ օգտագործել գույքը, ինքնուրույն կամ որևէ մեկ այլ անձի հետ խելամիտ քայլեր իրականացնել տվյալ վկայագրով վնասներից խուսափելու կամ դրանք փոքրացնելու ուղղությամբ: Համարվում է, որ Ապահովագրվողը համաձայնվել է այդ պայմանի հետ, բայց չի բացառվում այն, որ Ապահովագրվողը կարող է գործեր Ապահովագրողի որոշակի գրավոր ցուցումներին համապատասխան Սպասման Ժամանակաշրջանի ընթացքում:

3. Վնասի վերաբերյալ ծանուցում

Որևիցե իրադարձության հայտնաբերման դեպքում, որով հավանական է, որ տվյալ վկայագրով վնասների հատուցման պահանջ կներկայացվի, Ապահովագրվողը պետք է խելամիտ ժամանակահատվածում Ապահովագրողներին ծանուցում ուղարկի:

4. Ապացույցների տրամադրում

Վնասը տվյալ վկայագրով ծածկված լինելը, երաշխիքները խախտված չլինելը և բացառությունները կիրառման ենթակա չլինելը ապացուցելու պարտականությունը ընկած է Ապահովագրվողի վրա:

5. Համա ապահովագրություն

Ապահովագրվողը պետք է պահպանի բոլոր վնասների մասով համաապահովագրության բոլոր պահանջները:

6. Ապահովագրվողի հետ ծանոթացում

Ապահովագրողը պետք է երդում ընդունի և Ապահովագրողի կամ նրա ներկայացուցիչների կողմից նշած խելամիտ վայրում ծանոթանալու համար ներկայացնի բոլոր փաստաթղթերը, որոնք գտնվում են նրանց սեփականության կամ հսկողության տակ և վերաբերվում են կոնկրետ գործին, ինչպես նաև Ապահովագրվողը պետք է թույլատրի քաղվածքներ կատարել փաստաթղթերից և պատճենահանել դրանք:

Վերը նշված պահանջը չի պարտադրում Ապահովագրվողին ներկայացնել կամ պատճենահանել որևէ փաստաթուղթ, եթե դա կհանդիսանա հեղինակային իրավունքի կամ նմանատիպ իրավունքի խախտում, մինչև Ապահովագրվողը նման խախտումներից խուսափելու համար երրորդ անձանցից չի ստանա անհրաժեշտ թույլտվություն:

7. Այլ ապահովագրություն

Այս ապահովագրությունը չի հատուցում կորուստները կամ վնասվածքները, որոնք այն ժամանակ, երբ տեղի են ունենում, հանդիսանում են կամ կլինեն ապահովագրված այլ վկայագրով կամ վկայագրերով, չնայած սույն վկայագրի գոյությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ վնասը գերազանցում է այն գումարը, որը կվճարվեր այլ վկայագրով կամ վկայագրերով, եթե դա չի ազդում սույն վկայագրի վրա:

8. Սուբրոգացիա

Ապահովագրվողը այդ վկայագրով Ապահովագրողի խնդրանքով և հաշվին պետք է գործի ինքնուրույն կամ ինչ-որ մեկի հետ խորհրդակցելով, կամ գործել այնպես, ինչպես կարող է անհրաժեշտ լինել կամ Ապահովագրողի խելամիտ խնդրանքով Սպասման ժամանակահատվածից հետո ցանկացած ժամանակ, որպեսզի ուժի մեջ մտնեն որևիցե իրավունքներ կամ իրավունքի պաշտպանության միջոցներ կամ տուգանքներ վճարելուց ազատվելու համար, որ երաշխիքներ ստանա երրորդ կողմից հասցված վնասներից, ում Ապահովագրողները տվյալ վկայագրով ցանկացած վնասի վճարման իրավունք կտան:

9. Վնասների հատուցում

Վնասի հատուցումը վճարելուց հետո բոլոր դրան հաջորդող Ապահովագրվողի կողմից վճարված պարգևատրումները և հատուցումները, Ապահովագրողի համար եկամուտ են հանդիսանում: Այսպիսով, Ապահովագրվողը ընդունում է այն փաստը, որ ինքը պետք է ստանա նման հատուցման գումարներ Ապահովագրողների կողմից տրված լիազորություններով և որ նա կամ Ապահովագրվողի անունից այլ անձի կողմից նման գումարներ ստանալու դեպքում կվճարի այդ գումարները Ապահովագրողներին:

10. Վկայագրի լուծման և ապահովագրավճարի վերադարձման անհնարինություն

Վկայագրի լուծումը և Ապահովագրավճարի վերադարձը վկայագրի կարճաժամկետ գործողության դեպքում դիտվում է անհնար, եթե դա հատուկ չի համաձայնեցվել վկայագրի գործողության սկզբից:

11. Վերնագրեր

Վերնագրերը ներառված են տվյալ վկայագրում միայն հարմարության համար, և դրանք չեն ազդում տվյալ վկայագրի մեկնաբանության վրա:

12. Գործող օրենսդրություն և արբիտրաժ

Սույն վկայագրի մեկնաբանությունը, օրինականությունը, գործողությունը և դրանից բխող բոլոր հարցերը, կարգավորվում են անգլիական օրենսդրությամբ և բոլոր վեճերը, որոնք առաջացել են տվյալ վկայագրի հետ կապված կամ գծով կամ վնասի գումարի չափի որոշման գծով տվյալ վկայագրով, ուղարկվում են միջազգային արբիտրաժի Լոնդոնի դատարանի արբիտրաժ՝ փաստաթղթերը ներկայացնելու օրվա դրությամբ դրա օրենքներին համապատասխան: Միջնորդ դատարանի ընդունած որոշումը համարվում է վերջնական և ամրագրվում է բոլոր կողմերի համար և կարող է ներկայացվել իրավասություն ունեցող ցանկացած դատարան:

ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

1. Լիզինգի պայմանագիր

Պետք է երաշխիքներ ներկայացվեն, որ լիզինգի պայմանագիրը ստորագրված է բոլոր անհրաժեշտ կողմերի կողմից կամ նրանց անունից և գործողության սկզբից ունի իրավաբանական ուժ: Երաշխիքները համարվում են համապատասխան (կապված լիզինգառուի համար լիզինգի պայմանագրի օրինականության և վավերության հետ) անկախ իրավաբանի որոշմամբ (հղում ստորև բերված Երաշխիք 4-ին): Ընդ որում, դա չպետք է բերի սույն երաշխիքի խախտմանը, եթե Ապահովագրվողը համաձայնի հրաժարվել կամ հետաձգել լիզինգի պայմանագրով որևէ նախնական կամ հաջորդող պայմանների իրականացումը, բայց այդ սահմանափակումը չի վերաբերվում տվյալ վկայագրի Երաշխիք բաժնի գույքի Փոխարինման ենթաբաժնում թվարկված պայմաններին:

2. Բացահայտում

Պետք է ներկայացվեն երաշխիքներ, որ վկայագրի գործողության սկզբից Ապահովագրվողը չունի ոչ մի տեղեկություն այնպիսի գործի, փաստի կամ հանգամանքների մասին, որոնցով, ամենայն հավանականությամբ, կներկայացվեն վնասի հատուցման պահանջները:

3. Կմախքի և պատասխանատվության ապահովագրություն

Պետք է ներկայացվեն երաշխիքներ, որ լիզինգի պայմանագրով պահանջվում է, որ լիզինգառուն ձևակերպի ռազմական ռիսկերի, կմախքի և այլ վտանգների, պատասխանատվության ապահովագրությունը լիզինգի պայմանագրի գործողության ժամկետով սույն դրույթում նշված պայմաններով:

4. Իրավաբանի որոշում

Պետք է ներկայացվի այն բանի երաշխիքը, որ Ապահովագրվողը Ապահովագրողին կներկայացնի որակավորված իրավաբանի գրավոր, օրինական, անկախ որոշումը Օտարերկրյա Պետությունում, որը հաստատում է, որ Օտարերկրյա Պետության գործող օրենսդրությունը նման որոշման տրամադրման ամսաթվով չի խոչընդոտում Ապահովագրվողին իրականացնել լիզինգի պայմանագրով սահմանված իր իրավունքները: Ապահովագրողները հաստատում են, որ (նշել ամսաթիվը, նշել իրավաբանին) որոշումը համապատասխանում է այստեղ բերված Երաշխիք բաժնի պահանջներին, և Ապահովագրողները համաձայն են ստորագրել նման որոշման պատճեն և կցել այն վկայագրին Ապահովագրողների կողմից Ապահովագրվողներից նման որոշում ստանալու դեպքում:

5. Գույքի փոխարինում

Պետք է ներկայացվի երաշխիք, որ Ապահովագրողները անմիջապես կտեղեկացվեն լիզինգի պայմանագրում գույքի ցանկացած փոխարինման մասին: Եթե նման փոխարինումը

չի ընդունվել Ապահովագրողների կողմից, ապա նման փոփոխման հետևանքով առաջացած վնասները չեն հատուցվում: Գույքի փոխարինումը սահմանվում է որպես լիզինգի պայմանագրում կամ գրավի պայմանագրում հետևյալ կետերի փոխարինում՝

1. վճարման պայմանները,
2. ապահովագրական համարվող պատահարները,
3. արտասահմանում լիզինգի պայմանագրի իրավական կարգավիճակը,
4. ապահովագրված օդանավի օգտագործումը/թռիչքների երթուղին,
5. տեխնիկական սպասարկման ապահովումը,
6. համաձայնության ժամկետը,
7. լրացուցիչ ապահովման հատումը,

երթ կա

8. լիզինգառուի/ենթավարձակալի անձը.

9. հետաքրքրությունների փոփոխությունը վարձակալության բնույթում,

10. Արբիտրաժ/Օրենսդրություն,

11. ապահովագրության նկատմամբ պահանջների փոփոխությունը,

12. ցանկացած փոփոխություն, որը լիզինգատուի խելամիտ կանխատեսմամբ կարող է ազդել օդանավի լրացուցիչ արժեքի վրա:

Ռազմական ռիսկերի, գողության և այլ վտանգների ապահովագրություն

Բաժին 1. Օդանավի կործանում կամ վնասվածք

1. Ներքոհիշյալ տերմիններին, պայմաններին և սահմանափակումներին համապատասխան, սույն ապահովագրության պայմանագրով ծածկույթի մեջ է ընդգրկվում օդանավի կործանումը կամ վնասվածքը, որոնք հետևանք են Ռազմական ռիսկերի, գողության և այլ վտանգների բացառման վերաբերյալ դրույթի հիման վրա (AVN48) հանդիսանում են Պոլիսի բացառություն, մասնավորապես՝

ա) պատերազմի, ներխուժման, արտաքին թշնամիների ակտերի, ռազմական գործողությունների (հայտարարված պատերազմ կամ չհայտարարված), քաղաքացիական պատերազմի, խռովության, հեղափոխության, ապստամբության, ռազմական դրության կամ իշխանության անօրինական զավթման կամ իշխանության անօրինական զավթման փորձի,

բ) գործադուլի, անկարգության, քաղաքացիական անհնազանդության գործողություններ կամ մասսայական անկարգության,

գ) մեկ մարդու կամ մարդկանց խմբի կողմից իրականացրած գործողությունների, անկախ այն հանգամանքից, որ նրանք հանդես են գալիս որպես սուվերեն պետության գործակալ թե ոչ, ուղղված քաղաքական կամ ահաբեկչական նպատակների հասնելու անկախ այն բանից թե ցանկացած գույքի վնասը կամ կորուստը հանդիսացել է նշված գործողությունների պատահական կամ կանխամտածված հետևանք,

դ) սեփականության կոնֆիսկացիայի, ազգայնացման, ձերբակալման, ազատազրկման, յուրացման, ռեկվիզիցիայի կամ ցանկացած կառավարության (քաղաքացիական, ռազմական կամ փաստացի գործող) կամ պետական կամ տեղական իշխանության կողմից օգտագործման կամ նրանց հրահանգով,

է) օդանավի կամ թռիչքի ընթացքում անձնակազմի առևանգում կամ անօրինական զավթում կամ բռնի ուժի կիրառմամբ հսկում (ներառյալ նման զավթման կամ հսկման

ցանկացած փորձ), որն իրագործել է օդանավի վրա գտնվող մեկ մարդու կամ մարդկանց խմբի կողմից առանց Ապահովագրողի համաձայնության:

2. Բացի այդ, ապահովագրական դեպք է համարվում Ապահովագրվողի վերահսկողության տակ չգտնվելու ընթացքում օդանավի կործանումը կամ վնասումը:

Օդանավը կհամարվի նորից Ապահովագրվողի հսկողության տակ, երբ այն շահագործման համար պիտանի վիճակում բարեհաջող վերադարձվի Ապահովագրվողին այն օդանավակայան, որը գտնվում է ապահովագրական ծածկույթում ընդգրկված երկրի տարածքում: Վերադարձը բարեհաջող է համարվում այն դեպքում, եթե օդանավը գտնվում է կայանատեղում՝ անջատած շարժիչով և առանց երրորդ անձանց պարտադրանքի:

Բաժին 2. Շորթման և գողության հետ կապված ծախսեր

Օդանավերի ցուցակում նշված սահմանաչափերի շրջանակներում և ներքոհիշյալ տերմիններին, պայմաններին, բացառություններին ու սահմանափակումներին համապատասխան՝ սույն ապահովագրության պայմանագրով հատուցվում է հետևյալ դեպքերով կատարված ցանկացած վճարման 90%-ը.

1. Օդանավերի ցուցակում նշված օդանավի կամ օդանավի ուղևորների կամ անձնակազմի համար վտանգ, որը ծագել է Պոլիսի գործողության ընթացքում:

2. Բռնագրավման, ինչպես նաև Բաժին 1-ի դ) և ե) կետերում նշված դեպքերի հետևանքով անխուսափելիորեն առաջացած հատուկ ծախսեր:

Բաժին 2-ին համապատասխան տրամադրվող ապահովագրական ծածկույթը չի տարածվի այն տարածքի վրա, որտեղ նման ապահովագրությունը համարվում է անօրինական: Ընդ որում, Ապահովագրվողը պատասխանատու է համապատասխան իշխանությունների կողմից չթույլատրված ցանկացած տեսակի պայմանավորվածությունների բացակայության համար:

Բաժին 3. Ընդհանուր բացառություններ

Համաձայն սույն Դրույթի՝ ապահովագրության պայմանագրով ապահովագրական դեպք չեն համարվում օդանավի կործանումը կամ վնասվածքը կամ այդ կործանման ու վնասման հետևանքով առաջացած վնասները և ծախսերը, որոնք

1. հետևանք են ներքոհիշյալ պատճառների մեկ կամ մի քանի կոմբինացիայի՝

ա) հետևյալ պետություններից որևէ մեկի միջև պատերազմի՝ (հայտարարված կամ չհայտարարված). Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն և Հյուսիսային Իռլանդիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն: Սակայն, եթե պատերազմը սկսվելու պահին օդանավը գտնվում է թռիչքի մեջ, ապա ապահովագրությունն երկարաձգվում է մինչև տվյալ օդանավի առաջին վայրէջքը,

բ) ապահովագրության պայմանագրում նշված ցանկացած Պետության կառավարության կամ այդ Պետության հասարակական կամ տեղական իշխանության կողմից օգտագործման կամ նրանց հրահանգով իրենց իրավասությանը համաձայն բռնագրավման, ազգայնացման, ձերբակալման, ազատագրկման, յուրացման, ռեկվիզիցիայի,

գ) քիմիական, կենսաբանական կամ կենսաքիմիական նյութերի արտանետումը, տարածումը, ազատումը կամ արտահոսքը կամ նման իրավիճակների առաջացման վտանգը, բացառությամբ այն դեպքերի երբ օգտագործվող նյութերը կամ վտանգը ուղղված են ուղղակիորեն հետևյալ դեպքերի իրականացման,

(i) ծովահենների հարձակումը կամ ցանկացած անօրինական հարձակում, օդանավի դեկավարման մարմինների անօրինական օգտագործում, որը բերել է օդանավի կորստին կամ վնասին I Բաժնի (ե) ենթակետին համապատասխան կամ

(ii) օդանավի կամ ուղևորների կամ անձնակազմի անդամների հանդեպ ցանկացած վտանգ, որը հանգեցրել է II Բաժնի համաձայն փոխհատուցման վճարման,

դ) ցանկացած պարտքերով, ֆինանսական պարտավորությունների կատարման անհնարինությամբ, ինչպես նաև դատական որոշմամբ պարտադրվող ֆինանսական պարտավորություններով,

ե) սեփականատիրոջ կողմից օդանավի տիրապետման իրավունքի վերականգնմամբ կամ նման վերականգնման փորձով կամ ցանկացած համաձայնության հիման վրա, որի կողմերից մեկն է հանդիսանում Ապահովագրվողը,

զ) ուշացմամբ, օդանավն օգտագործելու անհնարինության հետևանքով առաջացած և այլ վնասներով, որոնք առաջացել են II Բաժնում նշված պատճառների հետևանքով և կապված են օդանավի վնասման կամ կործանման կամ այլ պատճառների հետ,

2. ատոմային կամ միջուկային քայքայման և/կամ սինթեզի կամ նման ռեակցիայի կամ ռադիոակտիվ ուժի կամ նյութի օգտագործմամբ ցանկացած զենքի ցանկացած պայթյունի հետևանքով՝ ուղղակի կամ անուղղակիորեն առաջացած:

Բաժին IV. Ընդհանուր պայմաններ

1. Սույն դրույթը գործում է օդանավի կմախքի բոլոր ռիսկերի ապահովագրության պայմանագրում պարունակվող կամ դրանում ավելացնելու հնարավորություն տվող պայմաններով և սահմանումներով (բացառելով ապահովագրական պարզեր, քննության և պաշտպանության պարտավորությունները, ապահովագրության պայմանագրի վերականգնման մասին համաձայնությունը (ցանկացած), ֆրանշիզայի չափը կա ինքնաապահովագրման պայմանները, եթե դա կիրառելի է և բացառելով այն ինչ բերված է ստորև).

2. Օդանավի շահագործման բնույթին և թռիչքների աշխարհագրությանը վերաբերվող էական փոփոխություններ առաջանալու դեպքում, Ապահովագրվողը պարտավոր է անմիջապես հայտնել Ապահովագրողին այդ փոփոխությունների մասին: Էական փոփոխությունների հետևանքով առաջացած ոչ մի վնաս չի փոխհատուցվում Ապահովագրության գործող պայմանագրով, քանի դեռ այդ փոփոխությունները չեն ընդունվել Ապահովագրվողի կողմից:

«Էական փոփոխությունների» տակ կհասկացվեն Ապահովագրվողի գործունեության մեջ ցանկացած այն փոփոխությունները, որոնք կարող են դիտվել Ապահովագրվողի կողմից որպես ապահովագրական ռիսկի մեծացման կամ օդանավի վերականգնման հնարավորության կամ սուբրոգացիայի իրավունքի օգտագործման փոքրացման գործոններ:

3. Ապահովագրության պայմանագրով ապահովագրական հատուցում վճարելու անհրաժեշտ պայման է հանդիսանում Ապահովագրվողի կողմից սահմանումների, պայմանների, դրույթների և ապահովագրության պայմանագրին լրացումների պատշաճ կատարումը: Մասնավորապես Ապահովագրվողը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ միջոցները, որ երաշխավորի, որ նա կատարում է ցանկացած երկրի բոլոր օրենքների պահանջները, որի իրավասության տակ կարող է գտնվել օդանավը և ստանա բոլոր անհրաժեշտ թույլտվությունները օդանավի օրինական շահագործման համար:

4. Սույն դրույթի Բաժին IV-ի և օդանավերի ցուցակին համաձայն՝ Ապահովագրողը համաձայն է հետևել օդանավի կմախքի բոլոր ռիսկերից ապահովագրության պայմանագրին ապահովագրության ծածկույթի վերաբերյալ երաշխիքները խախտելու, բողոքարկումների

փոխադարձ չներկայացման համաձայնագրի և սուբրոգացիայի իրավունքից հրաժարման մասով:

**Բաժին V. Ապահովագրության պայմանագրի գործողության դադարումը
համաձայնությամբ և ապահովագրության պայմանագրի գործողության
ինքնըստինքյան դադարումը**

1. ա) Ապահովագրողները իրավունք ունեն ապահովագրական պարգևի դրույքաչափի և/կամ ապահովագրության աշխարհագրական սահմանների վերանայման ծանուցագիր տալ, որը գործում է ծանուցագիրը ստորագրելու ամսաթվի ժամը 24.00-ից 7 օրվա ընթացքում: Այն դեպքում երբ ապահովագրական պարգևի դրույքաչափի և/կամ ապահովագրության աշխարհագրական սահմանների վերանայումը չի հաստատվում Ապահովագրվողի կողմից վերը նշված 7 օրվա ընթացքում, ապա ծանուցագիրը ստորագրելու օրվանից սկսած 7 օր լրանալուց հետո ապահովագրության պայմանագրի գործողությունը ինքնըստինքյան դադարում է:

բ) Չնայած 1. ա) կետի դրույթներին, սույն ապահովագրության պայմանագիրը Ապահովագրողի կողմից ապահովագրական պարգևի և/կամ ապահովագրության պայմանների և կամ ապահովագրության աշխարհագրական սահմանների մասով ինքնըստինքյան ենթակա է վերանայման՝ ատոմային կամ միջուկային քայքայման և/կամ սինթետիկ կամ նման ռեակցիայի կամ ռադիոակտիվ ուժի կամ նյութի կիրառմամբ ցանկացած զենքի ցանկացած պայթյունի դեպքում, անկախ նրանից թե ապահովագրված օդանավը ենթարկվել է նշված իրադարձությունների ազդեցությանը ուղղակիորեն, թե՛ ոչ: Այդ դեպքում երբ ապահովագրական պարգևի և/կամ ապահովագրության պայմանների և/կամ ապահովագրության աշխարհագրական սահմանների վերանայումը չի հաստատվում Ապահովագրվողի կողմից վերը նշված 7 օրվա ընթացքում, ապա ծանուցագիրը ստորագրելու օրվանից սկսած 7 օրը լրանալուց հետո ապահովագրության պայմանագրի գործողությունը ավտոմատ դադարում է:

գ) Սույն պայմանագրի գործողությունը կարող է դադարեցվել Ապահովագրվողի կամ Ապահովագրողի կողմից վկայագրի գործողության սկզբի պահից 3 ամսյա ժամկետը լրանալուց առնվազն 7 օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնելու միջոցով:

2. Անկախ նրանից, թե ապահովագրության պայմանագրի գործողության դադարեցման մասին ծանուցումը ուղարկվել է, թե՛ ոչ, ապահովագրությունը ինքնըստինքյան դադարում է:

Հետևյալ երկրներից ցանկացածի միջև պատերազմ սկսվելու դեպքում (անկախ նրանից հայտարարված է այդ պատերազմը, թե՛ ոչ). Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ֆրանսիա, Ռուսաստանի Դաշնություն, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն:

Այն դեպքում, երբ պատերազմը սկսելու պահին օդանավը գտնվում է թռիչքի մեջ, ապահովագրական ծածկույթի գործողությունը չի դադարում և չի կասեցվում, այլ շարունակվում է գործել մինչև վերջինիս կողմից առաջին վայրէջքը կատարելը:

LSW555C

(01/04/05)

Առավելագույն վտանգով երկրների և շրջանների բացառում

1. Սույն Վկայագիրը չի ծածկում օդանավի այն վնասը կամ կործանումը, ինչպես նաև այն վնասները, որոնք առաջացել են հետևյալ երկրների տարածքում՝

ա) Ալժիր, Կաբինդա, Բուրունդի, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն, Կոնգո, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն, Էրիտրեա, Եթովպիա, Կոտ-դ'Իվուար, Լիբերիա, Նիգերիա, Սիերա-Լեոնե, Սոմալի, Սուդան:

բ) Կոլումբիա, Էկվադոր, Պերու:

գ) Աֆղանստան, Չեչնիա/Ինգուշերիա, Լեռնային Ղարաբաղ, Պակիստան, Եմեն, Զամբուի և Քաշմիր, Նեպալ

դ) Շրի-Լանկա,

ե) Իրան, Իրաք, Սիրիա,

զ) Բոսնիա, Կոսովո

2. Սակայն ծածկույթը տարածվում է վերը նշված երկրների տարածքով թռիչքների վրա, եթե թռիչքը իրականացվում է ընդունված միջազգային օդային միջանցքի միջոցով և իրականացվում է I.C.A.O – ի պահանջներին համաձայն:

3. Ի լրումն վերը նշված երկրների, ծածկույթից բացառվում են ՄԱԿ-ի սանկցիաների տակ գտնվող երկրները, ցանկացած թռիչք իրագործելու համար:

4. Բացառված երկրներից ցանկացածները թռիչքից առաջ Ապահովագրվողների կողմից համաձայնեցված պայմաններով կարող են ընդգրկվել ապահովագրական ծածկույթի մեջ:

LSW617E

(01.01.2005)

Վեճերի լուծման կարգ

Կանոնների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

Վիճելի հարցերի լուծման ժամանակ Ապահովագրության պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

Ապահովագրության պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում: